Գ. ՏԱՐԻ ԹԻՒ 603 — ՇԱԲԱԹ 4 ՅՈՒՆՈՒԱՐ 1886 (Ն. Տ.) 16 ՅՈՒՆՈՒԱՐ 1886 — 10 ՐԷՊԻ ԻՒԼ ԱԽԸՐ 1303

40 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան-խան

غلطه‌ده نورادونكيان خانده آرهولك
غزته‌سی اداره‌سنه

Direction du Journal AREVELK
Noradoughian Han, Galata
CONSTANTINOPLE

Les annonces sont reçues à l'EASTERN AGENCY
Karakeuy, Déirmén han

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

40 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Կ. Պոլսոյ համար Տարեկան դահեկան արծաթ 2
» » Վեցամսեայ » » 1
» » Եռամսեայ » » ......
Գաւառաց » և տեղական
Թղթատարով տարեկան » » 2
Գաւառաց համար և տեղական
Թղթատարով վեցամսեայ » » 1
Օտար երկիրներ, տարեկան Ֆրանք ......
» » վեցամսեայ » ......
Դուրս ղրկուած լրագրաց ծանրութեան ծախքը Տնօրէնութեան վրայ
Խմբագրութեան ղրկուած նամակ կամ գրութիւն ետ չտրուիր

ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ ԸՆԴՈՒՆՈՒԻՆ
ԻՍԹԵՐՆ ԷՃԷՆՍԻ

Կ. ՊՈԼԻՍ
ՈՒՐԲԱԹ, 3 ՅՈՒՆՈՒԱՐ, 1886

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ. — ԲԱՑՈՒՄ ՆՈՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ. — ԻՌԼԱՆՏԱԿԱՆ ԽՆԴԻՐ.

Նորընտիր Խորհրդարանը շաբթուս մէջ գումարեցաւ: Նախորդ Երեսփոխանութեան ազատական Նախագահը, Պ. Արթուր Բիլ, վերընտրեցաւ: Շաբթուս մէջ Երեսփոխանաց երդմնեցուցման արարողութիւնը կը կատարուի: Վեհ. Թագուհւոյն պատգամագիրն, որով պահպանողական Նախարարութիւնը կը յայտնէ իւր ներքին և արտաքին աշխարհհավարութիւն, պիտի կարդացուի շաբաթ մը ետքը: Թերևս Լորտ Սալզպըրի հիմա զի մեծամասնութիւն չունի նոր Խորհրդարանին մէջ, ինչպէս չունէր Նախորդին մէջ: Մեծ խնդիր մը կայ, սակայն՝ որոյ վրայ եթէ Ազատականաց Պետերը չհամաձայնին, չեն կըրնար Նախարարութիւն մը կազմել, և հետևապէս պահպանողական Նախարարութեան հրաժարումն ալ չեն կըրնար պահանջել: Այդ մեծ խնդիրն է Իռլանտայի Ինքնօրէնութիւնը: «Պէ՞տք է ուրոյն Խորհրդարան մը և Ինքնօրէնութիւն տալ Իռլանտայի». — այս է մեծ խնդիրն, որ մանաւանդ մէկ ամսէ ի վեր սաստկապէս կը յուզէ հանրային կարծիքն յԱնգլիա: Ազատականաց մէջ տարաձայնութիւն կայ, ինչպէս Պահպանողականաց մէջ ալ: Պ. Կլատստոնի համար լսուեցաւ թէ յարմար է Ինքնօրէնութեան դասին, և թէպէտ Պ. Կլատստոն այս նկատմամբ հրատարակուած տեղեկութիւններն «անվաւեր» հռչակեց, բայց իւր այժմեան տեսութիւններն ալ չպարզեց դեռ: Այլ եթէ Պ. Կլատստոն յարմար է, Լորտ Հարթինկթըն, Պ. Կոշըն, Պ. Ֆոսթըր և այլ պետք Չափաւոր Ազատականութեան՝ կը հակառակին Իռլանտական Ինքնօրէնութեան: Մինչ կը կարծուի թէ Պ. Կլատստոն ի Տըպլին իռլանտական գրեթէ լիազօր Խորհրդարանի մը հաստատումը կը խնդրէ, Արմատականաց պետերը, Պ. Չէմպըրլէյն և Սըր Չարլզ Տիլք, չեն երթար այնչափ յառաջ, և կը շատանան առաջարկելով Իռլանտական Ազգային Խորհուրդ մը, ձեռնհաս միայն վարչային և տեղական խնդրոց տնօրինման: Իսկ Լորտ Սալզպըրի կ'առաջարկէ կեդրոնական ինքնօրէնութիւն չհաստատել Իռլանտայի մէջ, այլ միայն գաւառային ինքնօրէնութիւն, կազմելով, ժողովրդային ընտրութեամբ, Գաւառական Ժողովներ Իռլանտայի 32 գաւառաց մէջ, իւրաքանչիւրն իւր գաւառին տեղական գործովք զբաղելու ձեռնհասութեամբ: Որովհետև այսպիսի Գաւառական Ժողովներ Անգլիոյ և Սկովտիոյ մէջ ևս պիտի հաստատուին, երկուքին կուսակցութիւնք արդէն սկզբամբ համաձայն են Լորտ Սալզպըրիի ծրագիրն ընդունելու: Խնդիրն այն է թէ աւելի բան մը պէտք չէ՞ տալ Իռլանտայի: Պ. Բառնէլ և նորա հետևող իռլանտացի 85 Երեսփոխանք աւելի բան մը կը խնդրեն, և եթէ Խորհրդարանը շատանայ Լորտ Սալզպըրիի ծրագիրը վաւերացնելով, Իռլանտա գոհ չպիտի լինի, իռլանտական խնդիրն ալ բաց և վառ պիտի մնայ միշտ: Կը ծանուցուի թէ երիտասարդ այլ յոյժ ազդեցիկ պահպանողական Նախարար մը, Լորտ Ռանտոլֆ Չըրչիլ, եղբայր Մարլպորոյի պահպանողական Դքսին, Պ. Կլատստոնի վերագրուած գաղափարաց համամիտ է, համոզուելով թէ պէտք է աւելի բան մը տալ Իռլանտայի: Միւս կողմէ, Պ. Լապուշէր, ուրիշ պետ մը արմատական կուսակցութեան, Պ. Կլատստոնի գաղափարները կը ջատագովէ նոյնութեամբ, ինչ ինչ երաշխաւորութեամբք Իռլանտական Ինքնօրէնութիւնն ընդունիլ առաջարկելով: Թայմզ «անգլիական կարծեաց հայելին», խստիւ կը հարուածէ Պ. Կլատստոնի ծրագիրն, և ամեն օր քարոզ կը կարդայ իւր ընթերցողներուն՝ այն մեծամեծ վտանգաց վրայ զորս Բրիտանական Տէրութեան կրնայ սպառնալ ինքնօրէն Իռլանտա մը: Բայց նոյն իսկ Թայմզը կարդալով կարելի է համոզուիլ թէ անգլ. Տէրութեան ամբողջութիւնը ջերմապէս պաշտպանող շատ քաղաքական մարդիկ կան այսօր Անգլիոյ մէջ, որք լաւ ծրագրուած և խնամով գործադրուած իռլանտական Ինքնօրէնութենէ մը Անգլիոյ համար ո՛ և է վտանգ չեն տեսներ:

Այսպէս, երբ երկու տիրող կուսակցութեանց մէջ կարծեաց խորին զանազանութիւնք կան անգլիական Տէրութեան համար առաջնակարգ կարևորութիւն ունեցող խնդրոյ մը վըրայ. երբ Իռլանտայի ազգային կուսակցութիւնն, առաջնորդութեամբ Պ. Բառնէլի, աւելի քան երբեք հզօր և ազդեցիկ է, և ամեն օրինական միջոց ի գործ կը դնէ իռլանտացի ազգին մեծ բաղձանքն ի կատար ածելու համար, բնական է որ Նորընտիր Խորհրդարանին վրայ յառին ամեն աչք. ոչ միայն Անգլիացիք, այլ նաև օտարազգիք, օտար կառավարութիւնք և ժողովուրդք անհամբեր են տեսնել թէ ինչ երևոյթ պիտի առնայ՝ իռլանտական խնդրոյն հետ՝ Անգլիոյ քաղաքական վիճակը: Լորտ Սալզպըրի որոշած է, կ'ըսեն, եթէ Ազատականք Բառնէլեանց հետ միանալով տապալեն պահպանողական Նախարարութիւնը, լուծել նոր Խորհրդարանն, և ժողովրդեան կոչում ընել յատկապէս իռլանտական խնդրոյն վրայ, իւրեն նշանաբան դնելով «Պահպանութիւն ամբողջութեան Բրիտանական Տէրութեան»: Շատ կարևոր է, ուրեմն, այն առաջին նստաշրջան զոր շաբթուս մէջ սկսաւ Անգլիոյ վերակազմեալ Խորհրդարանը:

ՖՐԱՆՍԱ. Արմատական Պ. Լոքրուայի առևտրական նախարար անուանման առթիւ, զիջում մ'եղած է Արմատականաց պահանջներուն, տալով Արմատականաց ներկայացուցչին «Վաճառականութեան և արհեստագործութեան Նախարարի» տիտղոսն, որով Պ. Լոքրուա պիտի զբաղի նաև գործաւորաց և գործատերաց վերաբերեալ խնդրովք: Այս հանգամանքով, Պ. Լոքրուա յատկապէս ուշադրութիւն պիտի նուիրէ գործաւոր դասուց վիճակին բարւոքման:

—Գաւառակային քուէարկութեան ջնջման և նահանգային քուէարկութեան հաստատման պատճառներէն մին սա էր թէ, գաւառակի մը Երեսփոխանը բնակչաց կողմէ շարունակ խնդիրներ կը ստանար պաշտօններու և շնորհներու համար միջնորդելու. տեղացի ընտրողներուն գերին կը դառնար, որք նորա ժամանակը կը սպառէին՝ երեսփոխանական պաշտաման բնութեան հետ անհաշտ խնդրովք: Բայց հիմա Պ. Քլովիս Հիւկ, արմատական Երեսփոխանն Մարսիլիոյ, կը բացատրէ լրագրաց մէջ թէ նահանգային քուէարկութիւնն, (որով բովանդակ նահանգի մը Երեսփոխանք կ'ընտրուին բովանդակ նահանգին ընտրողաց քուէով, և հետևապէս ո՛չ մէկ մասին պարտական են յատկապէս,) շատ տարբեր արդիւնք չէ տուած: Պ. Քլովիս կը բացատրէ թէ մէն մի Երեսփոխան միջին առնուազն 50 ընտրողաց կողմէ խնդրագրեր ունի ի ձեռին Թղթատարական և հեռագրական պաշտօններու համար: Մէն մի Երեսփոխան ամիսն 30 խնդրագրեր կը հաղորդէ պատերազմական նախարարութեան, տեղափոխութիւն կամ արձակուրդ խնդրող զինուորականաց կողմէ: Ամեն երեք ամիսն անգամ մը 60 խնդրագրեր կ'ընդունի ծխախոտի խանութ բանալ ուզողներու կողմէ. և վեց ամիսն անգամ մը 15 մարդիկ կը յանձնարարէ նախարարութեան, իբրև արժանի Պատուոյ Լէգէոնին: Այսպէս, ամեն մէկ բաց պաշտօնի համար 2 կամ 3 հազար խնդրագիրք կը մատուցուին Երեսփոխանաց միջնորդութեամբ, և հետևանքն այն է որ Նախարարք այսչափ խնդրագրոց ո՛չ մին կը պատասխանեն, կամ առ առաւելն վիմագրեալ շրջաբերականաւ մը կը պատասխանեն, մինչ Երեսփոխանը կը խոստանայ խնդրարկուին՝ առաջին առթիւ խօսիլ Նախարարին: Վերջին Երեսփոխանութեան մէջ, մէն մի Երեսփոխան չորս տարի շարունակ պարտաւորուած էր ամիսը 400 խնդրարկուներու պատասխան տալ, մինչ հազիւ 20ին խնդիրներն ընդունուած էին Կառավարութենէն:

ԱՒՍՏՐԱԼԻԱ. Անգլիացիք հպարտութեամբ կը տեսնեն իրենց Աւստրալիացի գաղթականութեանց արագ աճումը: Ասոնք վերջին 12 ամաց մէջ 2,000,000 հոգիէն բարձրացած են 3,000,000 հոգւոյ, որ ըսել է 100ին 50 աճում: Վիքթորիա ամենէն բազմամարդ գաղթականութիւնն է, մէկ միլիոնի մօտ բնակչօք: Ոսկեհանքերն եղան առաջին պատճառ Վիքթորիայի գաղթականութեան աճման. բայց այժմ առաջուան չափ կարևորութիւն չունին: Ապա կուգայ Նոր Հարաւային Վալէսի գաղթականութիւնն: Աւստրալիոյ գաղթականութիւնք, իրենց արագ զարգացման վրայ վստահ, մեծաքանակ փոխառութիւններ կնքած են: Այս 3 միլիոն ժողովուրդ այժմ ընդհանուր պարտք ունի 126,000,000 անգլ. ոսկոյ, որ ըսել է՝ մարդ գլուխ 42 ոսկի, մինչ բուն Անգլիոյ մէջ, ընդհանուր պարտքէն մարդ գլուխ ինկած բաժինն է հազիւ 22 ոսկի: Բայց Աւստրալիացւոց փոխ առած գումարներն յատկացած են երկաթուղեաց շինութեան և այլ արդիւնաւոր շահագործութեանց: Ուստի, փոխանակ բեռ մը լինելու, որպէս Հին Աշխարհին մէջ, այս փոխառութիւնք իրօք ժողովրդային բարեկեցութեան աղբիւր մ'են, և գաղթականութեանց պետական հասոյթները ամ ըստ ամէ աճեցնելու կը ծառայեն:

ՍՈՒՏԱՆ. Անգլ. կառավարութիւնը իմացած է թէ Սուտանի ապստամբք դուրսէն զէնք կը ստանան, և ազդու միջոցներ ձեռք կ'առնու զայս արգիլելու համար: Կ'երևի թէ Արաբք զէնքերը կը ստանան Կարմիր Ծովէն. ուստի անգլիական հինգ մարտանաւք Կարմիր Ծովու Սուտանեան եզերքը մինչև ի Մասուա պաշարելու պաշտօն ստացած են:

ԱՒՍՏՐԻԱ. Լոյտի Ընկերութիւնն արագընթաց շոգենաւուց նոր գիծ մը հաստատելու վրայ է ի մէջ Թրիէստի և Աղեքսանդրիոյ: Երկու գեղեցիկ շոգենաւեր որք ժամը ծովային 14 մղոն պիտի ընթանան՝ յատկապէս Լոյտի համար շինուելու վրայ են Անգլիոյ մէջ:

—1885ին միայն Վիէննայի մէջ 323 ինքնասպանութիւնք գործուեցան, այն է՝ 21 հատ պակաս բաղդատմամբ 1884 տարւոյ: 323 ինքնասպաններէն 52ը կը պատկանէին իգական սեռին:

—Ի վերջ Դեկտ.ի, Աւստրիոյ երբուն պարտքին քանակութիւնն էր 411,997,314 ֆիորին:

—Հեռաձայնի (Թէլէֆօն) գործածութիւն արագապէս կը ծաւալի յԱւստրիա: Պոհեմիոյ երկու արհեստագործ քաղաքաց, Րայխընպէրկի և Կապլոնձի մէջև, որք 12 մղոն հեռի են իրարմէ, հեռաձայնով հաղորդակցութիւն հաստատեցաւ այս օրերս:

ՍՊԱՆԻԱ. Սպանիոյ Եպիսկոպոսական դասն յոյժ կարևոր որոշման մը յանգեցաւ: Ցայտարարութիւն մը պատրաստեց և Պապին հաւանութիւնն ստանալով, հրատարակութեան տուաւ բովանդակ Սպանիոյ մէջ: Այս Ցայտարարութեան յառաջաբանին մէջ երախտագիտութիւն կը յայտնուի Լևոն ԺԳ Պապին վերջին կոնդակին համար, որ «ի վերայ Քրիստոնէական կազմակերպութեան Տէրութեանց», և այն կոնդակի տրամադրութեանց համաձայն, հետևեալ հինգ որոշմունք կը ծանուցուին:

Նախ. Թէև Քաղաքականութիւնը Կրօնի վրայ հիմնեալ պարտի լինել, բայց Կրօն և Քաղաքականութիւն բոլորովին որոշ և տարբեր են, և երբեք պէտք չէ շփոթուին: Բաւական է որ հաւատքն և կաթոլիկ կրօնի սկզբունքներն յարգուին, ամեն կառավարական ձևք ընդունելի են:

Երկրորդ. Որովհետև Լրագրութիւնն, և ի մասնաւորի կաթոլիկ լրագիրք, սովորական միջոցն եղած են վիճաբանելու կրօնի և քաղաքականութեան վրայ, Եպիսկոպոսունք պարտաւորուած են յայտարարել թէ ո՛չ մի տեսակ հրատարակութիւն կարող է սահմանել թէ կաթոլիկ վարդապետութեանց համաձայն կառավարական ձևն ո՛րը պարտի լինել: Այս կէտի վրայ վաւերական կերպիւ կարծիք կրնան յայտնել միայն իւրաքանչիւր Թեմի եկեղեցական թերթք, որք Եկեղեցւոյն պաշտօնական օրագրութիւնն են:

Երրորդ. Որպէս զի կրօնն և քաղաքականութիւն յանդէպս իրարու չխառնուին, կը յայտարարուի թէ ո՛ և է թերթ որ չընդունիր Եպիսկոպոսաց այս որոշումն, այդու ևեթ պիտի դադրի կաթոլիկ նկատուելէ:

Չորրորդ. Թէև կաթոլիկ հրապարակագիրներուն լիակատար ազատութիւն կը տրուի իրենց վարդապետութիւնները ջատագովելու, բայց անոնցմէ կը խնդրուի աչքէ չվրիպեցնել քրիստոնէական բարեխոհութեան սկզբունքները, զորս Սրբազան Քահանայապետն իւր վերջին կոնդակով ևս ջերմապէս յանձնարարած էր:

Հինգերորդ. Մէն մի Եպիսկոպոս զայս Ցայտարարութիւն պիտի հրատարակէ իւր Թեմին եկեղեցական պաշտօնական թերթին մէջ, հանդերձ բոլոր ստորագրութեամբք որ դրուած են, առաւելագոյն կշիռ տալու համար անոր:

Ստորագրած են սպանիացի երեք Կարտինալք, երկու Արքեպիսկոպոսք և 47 Եպիսկոպոսունք:

* * *

Մեծ կարևորութիւն ունի այս Ցայտարարութիւն. զի Տոն Քարլոս իւր քաղաքական դատը միշտ կրօնի հետ խառնած էր, սպանիական գահուն վրայ իւր Թեկնածութեան անյաջողութիւնը նկատելով իբրև կաթոլիկ կրօնի անյաջողութիւնն, և յոյս տալով, եթէ բազմի Մադրիտի Գահուն վրայ, ամեն տեսակ անդրալեռնական և բռնապետական տնօրինութիւններ ի գործ դնելու յանուն Հռոմէական Եկեղեցւոյ: Ինչպէս Տոն Քարլոս, նորա դատը պաշտպանող թերթերն ևս այս քաղաքական յաւակնութիւնները կաթոլիկ կրօնին հետ սերտիւ կապուած կը նկատէին միշտ: Բայց այժմ Սպանիոյ եպիսկոպոսական դասը վճռական հարուածը կուտայ այս կարծեաց և յաւակնութեանց, հռչակելով թէ «ընդունելի է ամեն կառավարական ձև, բաւական է որ յարգէ հաւատքն և Կաթոլիկութեան սկզբունքները»: Բայց սպանիացի բարձրագոյն կղերին Ցայտարարութիւնն ո՛չ միայն հարուած մ'է Քարլոսականութեան, այլ նաև կաթոլիկ կղերին մտաց մէջ իրական յառաջդիմութիւն մը կը ցուցնէ, դարուս ազատական ոգւոյն համաձայն բարեշրջում մը, յորմէ կաթոլիկ երկիրք, անոնց կառավարութիւնք և նոյն իսկ Հռոմայ Եկեղեցին կրնայ մեծապէս օգտիլ, կ'ըսէ Թայմզ, բողոքական թերթ:

ՄՈՆԴԷ-ՔԱՐԼՕ. Ֆրանսայի և Իտալիոյ սահմանագլխոց վրայ, Միջերկրականի եզերքը կառուցեալ այս միջազգային խաղարանի ջնջման խնդիրը նորէն կը յուզուի՝ ըստ սովորութեան՝ այն ծանուցման վրայ թէ խաղամոլութիւնը նոր զոհ մ'ըրած է ի Մոնդէ-Քարլօ: Հարուստ Պրազիլեացի մը ինքնասպանութիւն գործեր է հոն, իւր բոլոր հարստութիւնը խաղու մէջ կորուսանելէ յետոյ: Իւր կին և զաւակունք թշուառ մնացած են:

—Մոնդէ-Քարլոյի Իշխանն իւր սահմաններէն արտաքսեց Ճիզուիթները: Սոքա 20 տարիէ հետէ յոյժ զարգացեալ վիճակի մէջ դպրոց մը կը պահէին հին վանքի մը մէջ, զոր Իշխանը տարին 32,000 Ֆրանքի վարձու տուած էր իրենց: Իտալացի ազնուականաց զաւակունք կ'երթային դաստիարակուիլ սքանչելի դիրք ունեցող այս դպրոցին մէջ: Վերջերս Ճիզուիթք իրենց յատուկ վարժարան մը կանգնելով ի Սան-Րէմօ, թողուցին վանքն, և Իշխանէն պահանջեցին 288 հազար Ֆր., փոխարէն այն նոր շինութեանց զորս աւելցուցած էին վանքին մէջ: Իշխանը մերժեց Ճիզուիթաց պահանջումը. Ճիզուիթք դատ բացին. Իշխանն այս ձեռնարկութեան պատասխանեց՝ իւր հողէն արտաքսելով զանոնք: Թէև իւր հըպատակք թախանձեցին ջնջել առնուլ այս հրաման, բայց Իշխանն անդրդուելի կը մնայ:

ԴԻՒԱՆԱԳԷՏԻ ՄԸ ԱՐԿԱԾՆԵՐԸ. Պուլկարիոյ Իշխանին յաղթական հանդիսիւ իւր մայրաքաղաքը մտնելուն առթիւ, Աւստրիոյ դիւանագիտական գործակալն ի Սոֆիա, Պարոն Ֆոն Պիկէլէպըն, իբրև հանդիսատես ներկայ էր միւս եւրոպական տէրութեանց ներկայացուցիչներուն կարգին մէջ: Պարոն Ֆոն Պիկէլէպըն ծննդեամբ Հէսցի է, և հետևապէս Աղեքսանդր Իշխանին հայրենակից է: Նորա ներկայութիւնը պուլկարական յաղթական հանդիսի մը մէջ դիտողութեան առարկայ եղաւ Պելկրատի մէջ և վիշտ պատճառեց Սերպիոյ պաշտօնական մարմնոյն, որ Վիէննայի կառավարութեան գանգատեցաւ: Հետևապէս, որոշուեր է պաշտօնանկ ընել զՊարոն Ֆոն Պիկէլէպըն:

—)(12)(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԺԻՒԼ ՎԵՐՆ

ՄԱԹԻԱՍ ՍԱՆՏՈՐՖ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Գ.

ԹՕՐՕՆԹԱԼԻ ՏՈՒՆԸ

—Բնաւ, պատասխանեց Մաթիաս Սանտորֆ, բայց բարձր դրամատեարք երբեմն այնպիսի տեղեկութիւններ կ'ունենան, զորս հասարակութիւնը շատ ուշ կ'իմանայ: Ահա այս պատճառաւ ըրի ձեզ զայն հարցում, ձեր դատողութեան թողլով պատասխանել կամ ո՛չ:

—Այնպիսի բան մը չեմ իմացած, պատասխանեց Սիլաս Թօրոնթալ. եթէ իմանայի, պարո՛ն կոմս, իրաւունք չունէի ծածկելու ձեզ նման յաճախորդէ մը, որոյ շահերը կրնային վնասիլ:

—Շնորհակալ եմ, պարո՛ն, պատասխանեց կոմսն, և ես ալ ձեզ պէս կը կարծեմ թէ վախու բան մը չկայ, ո՛չ ներսէն, ո՛չ դուրսէն. այս պատճառաւ քիչ օրէն պիտի մեկնիմ Թրիէստէն ի Թրանսիլվանիա, ուր ստիպողական գործեր ունիմ կարգադրելիք:

—Ա՛, պիտի մեկնի՞ք, պարո՛ն կոմս, հարցուց Սիլաս Թօրոնթալ անհամբերութեամբ:

—Այո՛... մինչև տասն-հինգ օր առ շատն:

—Անշուշտ վերադառնալու պայմանաւ:

—Չեմ կարծեր, պարո՛ն, պատասխանեց Սանտորֆ կոմս: Բայց, մեկնելէ առաջ կ'ուզեմ կանոնաւորել Արթէնաքի դղեակին բոլոր հաշիւներն, որք բաւական ժամանակէ ի վեր կարգադրուած չեն: Տնտեսապետս բազմաթիւ հաշուեցոյցներ, կալուածոց վարձեր, անտառաց հասոյթներ ղրկած է ինծ, զորս ժամանակ չեմ ունեցած ստուգելու: Կը ճանչէ՞ք այնպիսի հաշուագէտ մը, կամ կրնա՞ք ձեր գրագիրներէն մին տալ ինծ, որ այս գործս կատարէ:

—Աղէկ դիւրին բան չկայ, պարո՛ն կոմս:

—Շատ շնորհակալ կը լինիմ ձեզ:

—Ե՞րբ պէտք է ձեզ այդ հաշուագէտ:

—Հնար եղածին չափ շուտ:

—Ո՞ւր ղրկեմ:

—Իմ բարեկամիս, Զաթմար կոմսին տունն, Աքուէտոթթոյի ծառուղւոյն մէջ թիւ 89:

—Լա՛ւ:

—Ընելիք գործը տասն օրի չափ հազիւ կը տևէ, և հաշիւներս կարգադրուելուն պէս, ճամբայ պիտի ելնեմ: Ուստի պիտի աղաչեմ զձեզ, որ ձեր քով գտնուած դրամներս ալ ի պատրաստի բռնէք:

Սիլաս Թօրոնթալ այս առաջարկին առջև ցնցիւն մ'զգաց, զոր չնշմարեց Մաթիաս Սանտորֆ:

—Ե՞րբ կ'ուզէք որ ձեր դրամներն յանձնուին ձեզ, պարո՛ն կոմս, հարցուց:

—Յառաջիկայ ամսոյն 8ին:

—Յոյժ լաւ:

Այս պատասխանն ստանալէ յետոյ Սանտորֆ կոմս ոտքի վրայ ելաւ, և սեղանաւորն յուղարկաւորեց զայն մինչև նախասենեկին դուռն:

Երբոր Սիլաս Թօրոնթալ գրասենեակը վերադարձաւ, անդ գտաւ զՍարքանի, որ իսկոյն ըսաւ.

—Երկու օր չանցած պէտք է որ Զաթմար կոմսին տունը մտնեմ իբրև հաշուագէտ:

—Այնպէս պէտք է ընել, պատասխանեց Սիլաս Թօրոնթալ:

Դ.

ԾԱԾԿԱԳԻՐ ՊԻՏԱԿՆ

Երկու օր յետոյ Սարքանի զետեղուած էր Լատիսլաս Զաթմարի տան մէջ: Սիլաս Թօրոնթալի կողմէ ներկայացած և Սանտորֆ կոմսէն ընդունուած էր: Այսպէս միաբանէին սեղանաւորն և իւր գործակատարը, նպատակ ունենալով գաղտնիքի մը գիւտն, որ կրնար իրենց մատնել դաւադրութեան գլուխներն, և արդիւնքը պիտի լինէր իրենց համար, իբրև վարձատրութիւն իրենց ըրելիք մատնութեան, առատ հարստութիւն մը, որոյ մէկ մասը բաղդախնդրի մը գրպանը պիտի մտնէր, միւսն ալ սեղանաւորի մը սնտուկն, որ իւր պարտքերը չկրնալ վճարելու կէտին հասած էր:

Աւելորդ է ըսել թէ Սիլաս Թօրոնթալի և Սարքանիի միջև կնքեալ պայմանագիր մը՝ երկու հաւասար մասի կը բաժնէր նախատեսեալ շահն: Ասկէ զատ՝ Սարքանի՝ իւր ընկերին հետ Թրիէստի մէջ պատշաճապէս ապրելու և իւր ձեռնարկին ծախուց համար պէտք եղած դրամ իւր տրամադրութեան ներքև պիտի ունենար: Ասոր փոխարէն, և իբր երաշխաւորութիւն, սեղանաւորին յանձնած էր պիտակին պատճէնն, որ, ինչպէս գիտեն ընթերցողք, դաւադրութեան գաղտնիքը կը պարունակէր:

Թերևս փորձուի մարդ անխոհեմութիւն համարիլ Մաթիաս Սանտորֆի այս գործն: Այսպիսի պարագայից մէջ, ուր այնչափ ծանրակշիռ շահեր կը յուզուէին, դաւադրութեան մը գրեթէ նախընթաց օրն, յորում անոր պայթման նշանը ղրկուելու վրայ էր, այս բան մեծ անխոհեմութիւն կրնայ երևնալ: Բայց կոմսին այս գործն առանց կարևոր պատճառի չէր:

Նախ՝ ստիպողական շահ մ'ունէր, որպէս զի իւր անձնական գործերը կանոնաւորուած լինէին այն պահուն, երբ այնպիսի վտանգաւոր արկածի մը մէջ կը նետուէր, յորում իւր կեանքը վտանգի մէջ պիտի դնէր կամ առ նուազն աքսոր պիտի յանձն պիտի առնուր, եթէ գործը չյաջողելով՝ փախչելու հարկադրուէր:

Միւս կողմէ, Զաթմար կոմսին տունն օտար մարդ մը մտցնելը՝ կասկածներն հեռացնելու միջոց մը կը համարէր, որովհետև քանի մ'օրէ ի վեր նշմարել կարծած էր թէ լրտեսներ կը պտըտէին Աքուէտոթթոյի ծառուղւոյն մէջ, լրտեսներ, որք Սարքանիէն ու Զիրոնէն զատ ուրիշ մարդիկ չէին: Արդեօք Թրիէստի ոստիկանութիւնն աչքը բացա՞ծ էր իւր բարեկամաց և իւր վրայ, իրենց մեքենայութեանց վրայ: Մաթիաս Սանտորֆ կրնար կասկածիլ: Եթէ դաւադրութեան ժողովատեղին, որ ցայնժամ փակուած էր ամեն մարդոց առջև, կասկածելի կը թուէր, զայդ կասկած հեռացնելու լաւագոյն միջոցն էր բանալ զայն և օտար մարդ մ'ընդունիլ, որ հաշուական գործերով միայն պիտի զբաղէր անդ: Իսկ թէ այդ հաշուագէտին ներկայութիւնը կրնա՞ր վտանգաւոր լինիլ Լատիսլաս Զաթմարի և նորա հիւրերուն, — բնաւ երբեք: Ծածկագիր Թղթակցութիւնք պահուած էին ընդ մէջ Թրիէստի և այլ քաղաքաց հունգարական Թագաւորութեան: Առաջադրեալ շարժման վերաբերող Թուղթերուն ամենն ալ ջնջուած էին. հետևաբար դաւադրութեան ոչ մի գրաւոր հետք չկար: Միջոցները ձեռք առնուած էին արդէն, և նոր բան մը չկար ընելու: Սանտորֆ կոմսը նշան մը միայն պիտի տար երբոր ժամանակը գար: Ուստի, դրամատան գործակալի հոն մտնել ելնելն առաւել կը նպաստէր կասկածներու փարատման, եթէ երբեք կասկած մ'ունենար կառավարութիւնն:

Այս խորհրդածութիւն շատ ուղիղ էր, նախազգուշութիւնը լաւ էր, եթէ տան մէջ ընդունուած հաշուագէտը Սարքանի, և զայն յանձնարարողն ալ Սիլաս Թօրոնթալ չլինէր:

Միւս կողմէ, Սարքանի, ինքզինք կեղծելու մասին ամենաճարտար, իւր արտաքին ձևերէն ալ մեծ օգուտ պիտի քաղէր. բաց դէմք, անկեղծ և համարձակ երես, և իւր բովանդակ անձով պարկեշտ և պարզ կերպարան: Սանտորֆ և իւր երկու բարեկամք հարկաւ պիտի խաբուէին, և խաբուեցան: Հաշուագէտ երիտասարդը փոյթեռանդն, հաճոյակատար և կնճռոտ հաշիւներ մաքրելու մասին յոյժ յաջողակ էր: Միւս կողմէ, եթէ Սարքանի արդէն գիտցած չլինէր, բնաւ նշան մը չկար որ կասկածեցնէր զայն թէ հունգարական ցեղը գերման ցեղին դէմ յարուցանելու պատրաստ դաւադրութեան մը գլուխներուն առջև կը գտնուէր: Մաթիաս Սանտորֆ, Ստեփան Պաթորի և Լատիսլաս Զաթմար, իրենց գումարմանց մէջ մի միայն արուեստից և գիտութեանց վերաբերեալ խնդիրներով կ'զբաղէին: Ո՛չ գաղտնի Թղթակցութիւնք կային, ո՛չ ալ գաղտագողի երթևեկութիւնք տանը շուրջը: Բայց Սարքանի գիտէր իւր ընելիքն, և փնտռած առիթը չէր կրնար վրիպիլ. ուստի կ'սպասէր:

Լատիսլաս Զաթմարի տունը մտած ժամանակ՝ Սարքանի միակ նպատակ մ'ունէր, այն էր՝ ծածկագրութիւնը լուծելու ծառայող վանդակը ձեռքն անցունել: Արդ, որովհետև ծածկագիր նամակներ ոչ ևս կը հասնէին ի Թրիէստ, հարցուց ինքնիրեն թէ արդեօք խոհեմութեան նպատակաւ ջնջուա՞ծ էր վանդակն: Այս բան մեծ մտահոգութիւն պատճառեց իրեն, վասն զի իւր մեքենայութեան շէնքին միակ հիմն էր՝ կարդալ ուղեւոր աղաւնւոյն բերած պիտակըն, որոյ պատճէնն առած էր:

(Շարունակելի)

և նորա տեղ կարգել Մաճառ մը, Գ. Պուլոֆան, ընդհանուր հիւպատոսն ի Մոսքուա։

Բէշթեր Լոյտ կը հաստատէ թէ աւստրիական կառավարութիւնը դժգոհ է իւր Սոֆիայի ներկայացուցչին ընթացքէն, Աղեքսանդր իշխանին յաղթական վերադարձը շնորհաւորող դիւանագիտաց կարգին մէջ գտնուելուն համար։ —Սերպիոյ գիտողութիւնը թմանդրութիւն մ'էր լոկ, մեծ տխրութեան մը ուշադրութեան անարժան։ Գ. Պիկէլէպլէնի ընթացքն հասարակ քաղաքավարութեան գործ մ'էր, իբրեւ ներկայացուցիչ բարեկամական Տէրութեան մը, քաղաքական նշանակութենէ զուրկ բոլորովին։ Ընդհակառակն, նշանակութիւն ունեցող դէպք մը պիտի լինէր եթէ աւստրիական պաշտօնակցաց օրինակին, և իշխանին բարի գալուստ չմաղթէր։ Եթէ իշխանին արարքն ու ընթացքն հակառակ են Պերլինի Դաշնագրին, իւր երկրին վրայ յարձակող թշնամի մը յաղթանակաւ հալածելն ալ Դաշնագրին ո՛ և է տրամադրութեան չի հակառակիր, և երբ իւր գերիշխան Տէրութեան, Թուրքիոյ, երկու ներկայացուցիչք, Մահիր և Շաքիր փաշայք, իրենց գեղեցիկ համազգեստներն հագած, կը կենային ի շարս օտար ներկայացուցչաց, Գ. Պիկէլէպլէնի բացակայութիւնն անպատշաճ ցոյց մը պիտի լինէր Աւստրիոյ կողմէ։ Այնու ամենայնիւ, սոյնք է Բէշթեր Լոյտի գիտելու ցուցմունք թէ Սոֆիայի աւստրիական գործակալը պաշտօնէ ձգել հրաւիրուած է։ Վիէննայի կառավարութիւնը ծանուցեր է իւր այս որոշում Պելկրատի կառավարութեան, Միլան Թագաւորին [illegible] դիւրազգածութիւնն յարգած լինելու համար։

Բէշթեր Լոյտ, Հունգարիոյ կառավարութեան կէս-պաշտօնական թերթը, խմբագրականներ կը նուիրէ այս աննշան միջադէպին, ամբաստանելով զԲարոն Փոն Պիկէլէպլէն՝ «ի նպաստ պուլկարական միութեան և ընդդէմ Սերպիոյ ցոյց մ'ընելուն համար, իւր ներկայութեամբ յաղթական հանդիսին մէջ որով Աղեքսանդր իշխանը մտաւ Սոֆիա։»

ՊՈՒԼԿԱՐԻԱ ԵՒ ՍԵՐՊԻԱ. Սոֆիայէ յունուար 8 թուով կը հեռագրուի թէ ռուս բանակին հինգ բարձրաստիճան սպայք Պուլկարիոյ մայրաքաղաքն հասան յունուար 7ին, և անմիջապէս ընդունուեցան Աղեքսանդր իշխանին կողմէ։

— Պելկրատէ նոյն թուով կը հեռագրուի թէ Միլան Թագաւորն և սպարապետ Հորվադովիչ զօրավարը յունուար 8ին կը վերադառնան Նիշ։ Սերպիոյ բոլոր նախարարք պիտի ընկերանան Ն. Վեհափառութեան։ — Սերպ բանակին մնացեալ պահեստք ի զէն պիտի կոչուին յունուարի վերջը։ — Զուարիխի ցամաքային ատեաններ (Բօթէն) զորս սերպ կառավարութիւնն անգլ. գործարանէ մը կը գնէ իւր բանակին համար, շատ ազդու զէնքեր են՝ կիրճերն անանցանելի ընելու համար։ Աւստրիացիք կարի յաջողապէս ի կիր արկին զայնս Հէրսէքի պատերազմին մէջ։

ՀՆԴԿԱՍՏԱՆ. Լորտ Տըֆրին անգլո-հնդիկ կառավարութեան ընթացքին վրայ տարեւոր յայտարարութիւն մ'ըրաւ Կալկաթայի Օրէնսդիր Խորհրդոյն յունուար 4ի նիստին մէջ, բանախօսութեամբ մը որոյ հեռագրական համառօտութիւնը կը հրատարակեն Լոնտոնի թերթերն։ Հնդկաստանի ելմտական նախարարն իւր պատրաստած ելմտացոյցին բացատրութիւնը տալէ յետոյ, որով կը ցուցնէր թէ անգլո-հնդիկ կառավարութեան ծախքերն այլ և այլ պատճառներով յոյժ աւելցած են, և ինչ ինչ բացառիկ տուրքեր սահել և աւելցնել իսկ հարկաւոր եղած է, Լորտ Տըֆրին խօսք առնլով յայտարարած է թէ Հնդկաստանի ելմտացոյցին ներկայացուցած բացը ծագում առած էր այնպիսի պատճառներէ որք ելմտական վարչութեան ձեռքէն անկախ էին։ Գլխաւոր պատճառն էին այն զինուորական պատրաստութիւնք որք հարկաւոր եղած էին Ռուսիոյ դէմ մեծ պատերազմի մը ձեռնարկելու հաւանականութեան առթիւ։ Պատերազմն ա՛յն ատենուան մօտալուտ կը թուէր որ Գ. Կլատստոն յոյժ խաղաղասէր նախարարութիւնն իսկ զէն կը կոչէր պահեստներն և նաւատորմիղ կը սպառազինէր, 6 ու կէս միլիոն ոսկւոյ ծախիւք։

Փոխարքային պիրմանեան խնդրոյն վրայ ըսած է թէ անգլո-հնդիկ կառավարութեան ընթացքն, որ զՊիրմանիա բրիտանական տէրութեան հետ միացուց, Անգլիոյ նախարարութեան և ուրախ կարելի է ըսել նաև Անգլիոյ հանրային կարծեաց հաւանութեան արժանացած է։ Հնդիկ բնիկ թերթերն այս երկրակալութեան հակառակ խօսին, բայց նոքա անտեղեակ են խնդրոյն մանաւոր պարագայից։ Գրուեալ գաւառք առ այժմ դրուած են Հնդկաստանի փոխարքային անմիջական հսկողութեան ներքեւ. բայց ինք (Լորտ Տըֆրին) գործոց վիճակն անձամբ քննելէ յետոյ Մանտալէի մէջ, ակնյայտ բարեկարգ վարչութիւն մը հաստատել անդ։

Եւրոպական քաղաքական աշխարհին հետ Հնդկաստանի յարաբերութեան վրայ խօսելով, Լորտ Տըֆրին ըսաւ թէ Հնդկաստան յոյժ ուղղակի շօշափման մէջ է զինուորական մեծազօր տէրութեանց միոյն հետ։ Այս վստահութիւն ունիմ Զարին և նորա կառավարութեան խաղաղութեան և խաղաղասէր դիտաւորութեանց վրայ։ Կը հաւատամ նաև թէ Աֆղանստանի էմիրը կը փափաքի բարեկամաբար վարուիլ մեզ հետ։ Այց մեք պայմաններ դրած ենք էմիրին հետ և անոր նկատմամբ պարտականութիւններ յանձն առած ենք, որոց հաւատարիմ մնալով, չենք կրնար թոյլ տալ որ օտար տէրութիւն մը ոտնձգութիւն ընէ յԱֆղանստան։ Ազգաց միջեւ ընդհարմունք կախում ունին պարզ դիպուածներէ, ինչպէս նաև քաղաքական որոշ հաշիւներէ։ Եթէ Աֆղանաց էմիրը ներկայ չլինէր Ռաւալ Բինտիի ժողովին, ուր Հնդկաստանի իշխանաց հետ խորհրդակցեցայ, Բէնջտէի դիպուածը պատերազմի մը պայթման շարժառիթ կրնար լինել։ Արդ, անցեալն դասերն անտես ըրած և մեր պարտականութեանց մէջ թերացած կը լինինք եթէ Հնդկաստանի սահմանագլուխը պաշտպանութեան լաւ վիճակի մը մէջ չդնենք։ Պէտք է մեր դուռները փակենք ամեն արշաւանաց և ամեն ոտնձգութեան վտանգաց դէմ։»

Լորտ Տըֆրին [illegible] պաշտպանական միջոցք պիտի լինին, նախ, սահմանաց ուղղութեամբ և ռազմական տեսութեամբ երկաթուղեաց շինութիւնն. երկրորդ, սահմանաց երկայնութեամբ բերդերու կառուցումն և ամուր բանակետղերու հաստատումն. և երրորդ, զօրաց յաւելումն Հնդկաստանի անգլիացի և բնիկ բանակներուն վրայ։

ՌՈՒՍԻԱ. Բեդերսպուրկէ կը հեռագրուի յունուար 7 թուով թէ Գ. Մանուչարոֆ, երբեմն ուսանող Բեդերսպուրկի Համալսարանին, իբրեւ Ոչնչական ամբաստանուելով, Օտեսայի զինուորական ատենին կողմէ ի մահ դատապարտուած է։

«ԱՐԵՒԵԼՔ» չպիտի հրատարակուի յառաջիկայ երկուշաբթի և երեքշաբթի Ս. Ծննդեան տօնի առթիւ։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ծննդեան տօնի առթիւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր ընդունելութեան պաշտօնական օրն որոշուած է Ծննդեան երկրորդ օրն՝ երեքշաբթի։ Նոյն օր պիտի ներկայանան Ազգային Ժողովոյ Մայր Դիւանն, Ազգ. Կեդր. Վարչութեան Կրօնական ու Քաղաքական Ժողովներն, տեսուչ Հոգաբարձութիւնք, ազգային այլ պաշտօնական մարմինք, Թաղական Խորհրդոց դիւանք և կրթական ընկերութիւնք։

Ըստ յանձնարարութեան Ամեն. Ս. Պատրիարք Հօր, Բերայի քարոզիչ Արժ. Ներսէս վարդապետ Արսլանեան այս չորեքշաբթի օր, ընկերակցութեամբ պատուաւոր ազգայնոյ մը, Բերայ ռուսական դեսպանատունն երթալով, Նոր տարւոյ առթիւ շնորհաւորական այցելութիւն տուաւ ռուսական դեսպան Գ. Նէլիտոֆի։

Ազգ. Ժողովոյ Մայր Դիւանէն հետեւեալն ուղղած է մեզ ի հրատարակութիւն.

Ս. Ծննդեան տօնին առթիւ Մայր Դիւանիս կողմանէ Ամեն. Ս. Պատրիարք Հօր տրուելիք պաշտօնական այցելութիւնը տեղի պիտի ունենայ Ծննդեան երկրորդ օրն, երեքշաբթի, ժամ 7 ին։

Ուստի Մայր Դիւանս պատիւ ունի հրաւիրել զերեսփոխան Տեարս, որ եթէ կը փափաքին ընկերանալ Մայր-Դիւանիս, բարեհաճին յորոշեալ ժամու ներկայ գտնուիլ ի Պատրիարքարան։

Սէլանիկի հոգեւոր հովիւ, Արժ. Տ. Միքայէլ քահանայ, տեղւոյն ազգային մատրան համար եկեղեցական անօթներ խնդրած լինելով, նախընթաց օր Ազգ. Պատրիարքարանի կողմէ պէտք եղած անօթներն ղրկուեցան ի Սէլանիկ։

Ուս. Խորհուրդն իւր ժէ. նիստը գումարեց երէկ ի Խորհրդարանի Ղալաթիոյ, ատենապետութեամբ Իւթիւճեան Կարապետ էֆէնտիի և զբաղեցաւ հանրային ու թաղային խնդիրներով և Ընդհ. Շրջաբերական մը պատրաստեց Թաղային Հոգաբարձութեանց հաղորդուելու համար. սոյն շրջաբերականաւ Խորհուրդն կարեւոր հրահանգներ կուտայ ազգ. վարժարանաց։

Խորհուրդն անցեալ կիւրակէ օր այցելած լինելով Ազգ. Հիւանդանոցի Որբանոցն՝ որոշեց իւր այցելութեան արդիւնքն հաղորդել Հիւանդանոցի պատ. Հոգաբարձութեան։

Կը յիշուի թէ Մշոյ Ս. Կարապետի Վանուց միաբան Արժ. Գաբրիէլ վարդապետ Խաչատուրեան ժամանակէ մը հետէ մայրաքաղաքս կը գտնուի, Մշոյ Նէմիրկ գիւղի եկեղեցւոյն, ազգ. կալուածոց և գերեզմանատան վերաբերեալ դատի մը համար։ Մշոյ Նախնական դատարանն առեր առաջ Նէմիրկի ազգայնոց աննպաստ վճիռ տուած և 12,133 ղրուշ տուգանաց դատապարտած էր զանոնք։ Արդ, Պոլսոյ Վճռաբեկ Ատեանն որ կ'զբաղէր այս խնդրոյն վերաքննութեամբ, այս օրերս ջնջած է Մշոյ դատարանի վճիռն և իւր վճռագիրն յանձնած է Տ. Գաբրիէլ վարդապետին որ այս աւուր թղթատարով կը ղրկէ զայն Մշոյ առաջնորդարանին՝ հանդերձ հարկ եղած ծանօթութեամբք առ Գեր. Աւէտամեան Սրբազան՝ Առաջնորդն Տարօնոյ։ Առաջնորդարանը Վճռաբեկ Ատենի վճռագիրը պիտի յանձնէ [illegible] ատենին որուն դէմ բացուած էր Նէմիրկի ազգայնոց դատն, որ վերստին պիտի քննուի Մշոյ դատարանին կողմէ, քանզի որում նախորդ վճռագիրը ջնջուած է։

«Աղբիւր» ամսագիրը կ'ըսէ որ Հ. Ալիշանը գրել է Րաֆֆիին ձեռն վեր առնել վիպագրութիւնից և զբաղուել պատմական հետախուզութիւններով։ Արդ՝ խմբագրը— [illegible] ամսագիր—որ Գ. Րաֆֆին մտադիր է մօտ ժամանակներս գնալ Թէհրան պարսկական գրականութիւնով պարապել, նրա բանաստեղծական մասից մի ճաշակ տալու Հայոց, և պատմագրութիւնից քաղել այն ամենն, ինչ որ վերաբերում է մեր ազգի պատմութեան»։

(Մեղու Հայաստանի)

ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Հոգաբարձութիւնս շնորհակալութեամբ կը փութայ ծանուցանել թէ՝ ի Փարիզ բնակեալ ոսկերիչ Մեծ. Աթմաճեան էֆ. Լէյնաեան, իւր ամուսնութեան առթիւ բարեհաճեցաւ նուիրել 50 օսմ. ոսկւոյ գումար մի ի նպաստ Հաստատութեանս։

Առ այս Հոգաբարձութիւնս պարտ անձին կը համարի յանուն անդ. պատսպարելոց իւր ջերմագին շնորհակալիքն յայտնել յիշեալ Մեծ. Աթմաճեան էֆէնտիի սոյն մարդասիրական զգացմանցն համար։

Ի դիմաց Հոգաբարձ. Ազգ. Հիւանդ.

Ատենադպիր — Ատենապետ

Տ. ԿԻՒՄԻՒՇԿԵՐՏԱՆ — ՄԻՔ. ՅԱԿՈԲԵԱՆ

ՆԱՄԱԿ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԻՆԿԵԱՆ, 15 դեկտ. 1885

Երկիցս եղէ որ ի ձեռն Մեծ. Կարապետ էֆ. Տէր Յակոբեանի, Նախորդ անձնուէր Տեսչին երկսեռ վարժարանաց Բինկեան գիւղիս, Մեծ. Յովհաննէս էֆ. Շահեան պատուական հայրենակից մեր, ի յիշատակ հոգւոյ իւր վաղամեռիկ որդւոյ Նշանիկ էֆէնտիի, նուէրներ կը շնորհէ գիւղիս վարժարանաց։ Անցեալ տարի շնորհեց վեց օսմ. ոսկի, յորմէ բաժին հանեց քահանայից և ընդհանուր պաշտօնէից և կարօտելոց։ Այս տարի շնորհեց 27 կտոր ընտիր մատեաններ, 10 ոսկւոյ արժողութեամբ, ի զարդ մատենադարանին և ընթերցումի սանուց։

Ուստի և մեք ի դիմաց և յանուն հայրենակցաց մերոց և ի մասնաւորի Սանուց ընկերութեան, կը փութամք մեր սրտագին շնորհակալիքը նուիրել Մեծ. Շահեան Յովհաննէս էֆէնտիի, որ թէ և այնքան երկար տարիներէ հետէ հեռի ի հայրենեաց, այլ միշտ հոգւով և մտօք մերձ է նմա, և չմոռնար մխիթարել անոր պաշտօնեաներն և քաջալերել վարժարանն, որ սանունք այսօր իրենց մատաղ սրտերու մէջ ջերմ զգացմամբ և երախտագէտ ոգւով կը յայտնեն զինքն մխիթարութեան իւր վշտացեալ և աղխարշ սրտի։

Ի դիմաց Սանուց ընկերութեան

Ատենադպիր — Ատենապետ

Տիգրան Ա. Տէր Յովսէփեան — Գ. Նշան Մ. Գօնչէկիւլեան

* *

Գոհութեամբ կը հրատարակենք վերոգրեալ նամակն, փափաքելով որ գաւառներէն յաճախ ստանանք այսպիսի շնորհակալեաց նամակներ քան տեղւոյն մասնաւոր խռովութեանց լուրեր.— Շահեան էֆ. որ վերջերս Պոլիս հաստատուած է, այսու հանդերձ չմոռնար իւր բնիկ հայրենիքը։ Եթէ ի Պոլիս հաստատեալ ամեն գաւառացի հետեւէին այսպիսի օրինակներու և նպաստէին կրթութեան գործին, տարակոյս չկայ թէ իրական ծառայութիւն մը մատուցած կը լինին ազգին, մանաւանդ երբ կը նպաստեն պատրաստելու երախտագէտ սանուց ընկերութիւններ, ինչպէս Բինկեանի Սանուց ընկերութիւնն որ ինքն գնութեան գեղեցիկ օրինակ կը հանդիսանայ։ Մեզ կը հաղորդեն նաև թէ Նշան էֆ. Գօնչէկիւլեան, ատենապետ Բինկեանի Սանուց ընկերութեան, չորս տարիէ ի վեր ձրաբար կը դասախօսէ դպրոցին մէջ։ Ահա հետեւելու գեղեցիկ օրինակ մը։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նոր տարւոյ առթիւ Վեհ. Սուլթանը շնորհաւորական հեռագիր մ'ուղղած է Ռուսիոյ կայսեր։

Մօնիթէօր Օրիանթալ որ ծանուցած էր թէ Բ. Դուռը մտադիր է րումէլիական խնդրոյն լուծման եղանակ մ'առաջարկել իւր կողմէ, իւր երէկի թուով կ'ըսէ թէ այդ եղանակ պիտի առաջարկուի մեծ Տէրութեանց ա՛յն ժամանակ երբ Բ. Դրան և Աղեքսանդր իշխանին բանակցութիւնք համաձայնութեան մը յանգին։

Սերպիոյ Թագաւորը Թաքովօ պատուանշանին երրորդ աստիճանը նուիրած է երբեմն Պելկրատի օսմանեան դեսպանատան առաջին քարտուղար Մավրոքորտաթօ էֆէնտիի։

Գաղթականաց յանձնաժողովոյ նախագահ Րիզա պէյի որդի Վէլիէտտին պէյ, որ ժամանակէ մ'ի վեր անկողնոյ կը ծառայէր, մեռաւ 24 տարեկան հասակին մէջ։

Վեհ. Սուլթանն հրամայած է որ իւր անձնական գանձէն վճարուի յուղարկաւորութեան և թաղման ծախքերն և Վէլիէտտին պէյի մարմին ամփոփուի Գուլէ Գարուի գամբարանին մէջ։

Հելլենական կառավարութիւնն արտօնութիւն տուած է իւր զօրաց մեծ մասին որ Տարեգլխի և Ծննդեան տօնի պատճառաւ իրենց հայրենիքներն երթան։ Հելլենական կառավարութեան այս ընթացքէն կը հետեւի թէ հելլեն զօրքերը կերպով մը ցրուելու վրայ են։

Թօքէ՛ Սերպիոյ և Պուլկարիոյ միջև խաղաղութեան բանակցութեանց համար դեռ վերջնական վայր մը որոշուած չլինելն յիշեցնելով, ցաւ կը յայտնէ այս մասին, ըստ որում, կ'ըսէ, հազարաւոր զինուորը զինու տակ կը սպասեն և խաղաղութեան կնքումն ալ այսչափ կը յապաղի։

Երէկ ծանուցինք թէ Խտիվին առանձին տեսակցութիւնք Մուխթար փաշայի և Սըր Ուոլֆի հետ յունուար 9ին տեղի ունեցեր է. աւասիկ քանի մը մանրամասնութիւններ այս տեսակցութեան վրայ։

Խտիվն յայտներ է թէ նկատելով խնդրոյն վերին աստիճան կարեւորութիւնն, ինք անձամբ պիտի մասնակցի բանակցութեանց, առանց իւր կողմէ պատուիրակ կարգելու։ Հետեւաբար անմիջապէս վիճաբանութիւն բացուեր է անգլո-թրքական պայմանագրին վրայ։ Մուխթար փաշա նախ և առաջ յայտներ է թէ Սուտանը խաղաղեցընելու համար, հարկ է հաշտութիւն առաջարկել Սուտանցւոց, բայց միանգամայն պատերազմի պատրաստ գտնուիլ։ Վեհ. Սուլթանի բարձր Գօմիսէրն յարեր է թէ օսմանեան բանակ մը միայն կարող պիտի լինի յաջող պատերազմ մը մղել։

Այս դիտողութեանց վրայ ընդհանուր վիճաբանութիւն բացուեր է ի մասին եգիպտական բանակին վերակազմութեան և հարկ եղած ծախուց, սակայն ո՛րևէ որոշում չէ տրուեր այդ առաջին նստին մէջ։

Ըստ Մէսսէժէ Տը Թիւրքիի եգիպտական խնդրոյն լուծումն հետզհետէ կը դժուարանայ. «Ահմէտ Մուխթար փաշա իւր տեղեկագրերն ուղղակի Բ. Դրան կը ղրկէ, կ'ըսէ յիշեալ թերթն, և իւր եզրակացութիւնք սա կարծեաց կը յանգին թէ հարկ է օսմանեան զօրք ղրկել ի Սուտան ապստամբաց դէմ կռուելու համար. մանաւանդ, անգլիացիք զգուշանալու են Սուտանի կողմերն երեւնալէ, որպէս զի իրաց կացութիւնն եւս առաւել չդժուարացնեն։ Բ. Դուռն, մինչ ըստ կարծեաց օսմ. Գօմիսէրին, պարտի իւր ազդեցութիւնը զօրացնել յԱֆրիկէ, ո՛չ թէ անգլո-թրքական դաշնագրով մ'այլ տարբեր եղանակաւ մը, և Սուտանցիք պէտք է ճակատ առ ճակատ դան թուրք զօրաց հետ։

«Մուխթար փաշայի և Սըր Ուոլֆի յարաբերութիւնք յոյժ քաղաքավարական են, բայց չունին այն մտերմական հանգամանքն զոր բրիտանական պատուիրակը կ'սպասէր։»

Յունաց Ամեն. Պատրիարքը Ծննդեան և Կաղանդի օրերն հիւանդ լինելով, չէ կրցած եկեղեցի իջնել, սակայն Պատրիարքարանի մէջ ընդունած է պետական անձանց և յոյն երեւելեաց այցելութիւններն։

Դանուբի Միջազգային Յանձնաժողովոյ օսմ. պատուիրակի ծախուց յատկացեալ գումարն Արտաքին գործոց նախարարութեան ելմտացոյցէն ջնջուած լինելով, այդ պաշտօն՝ զոր յառաջագոյն կը վարէր Բօսթաքի Քարաթէօտորի էֆէնտի, յանձնուած է Պուքրէշի օսմ. դեսպանատան քարտուղար Յարութիւն էֆէնտիի, որ ի մօտոյ Կալաց պիտի երթայ այս նպատակաւ։

Կայսերական կառավարութեան կողմէ Եւրոպիոյ գործարանաց յանձնարարեալ ծովամարտիկ նաւերը կ'սպասուին յառաջիկայ շաբթու։

Դրամատէր մը առաջարկած է կայս. կառավարութեան, նորվէկիական 12 մեծ փոխադրանաւ գնել։ Այս նպատակաւ ձեռնհաս իշխանութեան ուղղեալ տեղեկագիրը կ'ըսէ թէ այս գնմամբ Ծովային Նախարարութիւնը պիտի շահի այն մեծաքանակ գումար զոր իւր զինուորական փոխադրութեանց համար կը վճարէ շոգենաւային օտար ընկերութեանց, և միանգամայն պիտի կարենայ բարեկարգել Մախսուսէի երթեւեկութիւններն։

Յայտնի չէ թէ կայս. կառավարութիւնը պիտի հաւանի՞ այս առաջարկին։

ՐԷԺԻՆ

Օսմ. կայս. Պանքայի տնօրէն Գ. Տըֆօ երէկ Բ. Դուռն երթալով երկար տեսակցութիւն մ'ունեցաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին հետ, Րէժիի վերաբերեալ գործոց վրայ։

«Քրէտի-Անշթալտ» Պանքայի տնօրէն Գ. Զիֆֆեր յառաջիկայ շաբթու մայրաքաղաքս կ'սպասուի, ներկայ գտնուելու համար Րէժիի վարչական խորհրդոյ նիստերուն, որոց կը պատկանի Վիէննայի մէջ ընկերութեան արտօնատերաց Ընդհ. Ժողովոյն կողմէ տրուած որոշմանց գործադրութիւնն։

Այս առթիւ յիշեալ դրամատունն հետեւեալ պաշտօնական զեկոյցն ուղղած է Վիէննայի լրագրաց։

Օսմ. ծխախոտի Րէժիի արտօնատէրք այս օրերս Ընկերութեան մէկ քանի անդամոց հետ խորհրդակցեցան Րէժիի տագնապալի կացութեան և զայն կարելւոյն չափ դարմանելու համար ձեռք առնուելիք միջոցներուն վրայ։ Ծխախոտի մենաշնորհի հաստատութենէն մինչեւ անցեալ տարւոյ սեպտեմբեր, այսինքն 18 ամիս, Րէժիի հասոյթք համեմատաբար աւելնալու վրայ էին. իսկ սեպտեմբերէն ի վեր, սկսան նուազիլ։ Այս պարագայ, ինչպէս նաև Րէժիի և Հանրային Պարտուց վարչութեանց միջեւ եղած կարգադրութեան Բ. Դրան կողմէ չվաւերացուիլը գլխաւոր առարկայն եղան Վիէննայի մէջ գումարեալ ընդհանուր ժողովոյն վիճաբանութեանց։ Յայտնի է թէ այս կարգադրութեան նպատակն էր մասամբ հատուցանել Րէժիին այն մեծաքանակ վնասը զոր կը կրէ Եգիպտոսի մաքսային գրութեան մէջ ներմուծեալ փոփոխութեան պատճառաւ։ Ակներեւ յայտնուեցաւ որ եթէ Թուրքիա չուզէ վաւերացնել յիշեալ կարգադրութիւնը, Րէժիէ [illegible] անհնար կը լինի։

Եգիպտոս ղրկուելիք ծխախոտի հասոյթք՝ որ հիմ բռնուած են Րէժիի կողմէ կառավարութեան վճարեալ տարեկան հարկի որոշման, Րէժի հաստատութենէն առաջ կը հանէին տարեկան 150,000 ոսկւոյ, իսկ այժմ, Եգիպտոսի մէջ տեղի ունեցած փոփոխմանց պատճառաւ, շահագործման երկրորդ տարին այդ հասոյթք 35,000 ոսկւոյ պիտի իջնեն, հետեւաբար տարեկան 115000 ոսկւոյ վնաս մը կայ։

Բաց յասմի, մինչեւ ցարդ եղած փորձերէն կ'երեւի թէ օսմ. կառավարութիւնն ըստ բաւականին ոյժ չէ տուած Րէժիին ծխախոտի մաքսանենգութեանց առաջքն առնլու համար։ Այս անփութութիւն եւս առաւել վնասակար եղած է Ընկերութեան, ըստ որում Պալքանեան Թերակղզւոյն մէջ տեղի ունեցած քաղաքական անցից պատճառաւ, օսմ. ծխախոտի սպառումն զգալապէս խանգարուած է։

Հետեւաբար Րէժիի արտօնատէրք համաձայնած են վարչական խորհրդոյ անդամոց հետ՝ որք ներկայ գտնուեցան ի Վիէննա, ինչ ինչ առաջարկութեանց վրայ որք պիտի մատուցուին օսմ. կառավարութեան, այս տագնապալի կացութիւնը դարմանելու նպատակաւ։ Միանգամայն համաձայնած են այն միջոցներուն վրայ զորս ձեռք պիտի առնուն, եթէ Բ. Դուռը մերժէ դարձեալ վաւերացնել Հանրային Պարտուց վարչութեան հետ եղած կարգադրութիւնն և գործադրել պայմանագրով իւր սահմանած պարտականութիւններ որոց գործադրութիւն ո՛ր և է դժուարութիւն չընծայէր։

Ձեռնարկութեան անմիջական պայմանաց վրայ եղած վիճաբանութիւններէ յայտնուած է որ Րէժիի գործարանք առ այժմ միայնոյն կերպիւ կը գործեն. այսու հանդերձ, ոչ միայն բացարձակ հարկ մ'է, այլ նաև շատ կարելի որ ընդհանուր ծախքերը մեծապէս զեղչուին։

Արտօնատէրք Վարչութեան անդամոց հետ խորհրդակցած են նաև ձեռք առնուելիք ուրիշ միջոցներու վրայ, որոց նպատակն է հաստատ պահել Րէժին և պիտի հակեն որ այդ միջոցներ գործադրուին անյապաղ։

Նոյէ Ֆրէյէ Բրէսէ լրագիրն հետեւեալ տողերը կը գրէ «Քրէտի Անշթալտ»ի այս պաշտօնական զեկուցման հրատարակութեան առթիւ.

Այս զեկոյցէն կ'երեւի թէ օսմանեան ծխախոտի Րէժին ծանր դժուարութեանց մատնուած է և թէ գերմարդկային ճիգեր պէտք են փրկելու համար գէթ մէկ քանին այն հիմանց որոց վրայ կառուցեալ է ամբողջ ձեռնարկութիւնն։ Վիէննայի Պանքան իրաւամբ կ'երկնչի որ Րէժիին պատահելիք աղէտի մը հակահարուածը զգալի չլինի Քրէտի Անշթալտի համար։ Յայտնի է թէ այս դրամատուն 12,000է աւելի Րէժիի բաժնեթուղթ ունի և թէ բաղդատմամբ վերջին վեցամսէի հաշուեկշռոյն՝ յորում այդ բաժնեթուղթք 101ական ֆիորին գնով նշանակուած էին, Քրէտի Անշթալտ պանքան այն ատենէն ի վեր կորուսած է մէն մի բաժնեթղթի վրայ 20ական ֆիորին, այն է ընդամենն 240,000 ֆիորինի կորուստ մը։ Արտօնատէրք որոշած են ծայրայեղ զգուշութեամբ գործել փրկելու համար իրենց ընտեղծած ձեռնարկն որ յոյժ խախտած է։ Րէժին ներկայ տարւոյ մէջ եւ անցեալ տարւոյ չափ մեծ բաց մը պիտի ունենայ, ըստ որում դրամագլխոյն մեծ մասը ծախսուած է շահագործման։ Եւրոպիոյ մէջ մեծ անհամբերութեամբ կ'սպասուի Բ. Դրան և Րէժիի միջեւ ծագած անհամաձայնութեան ելից։

Աւելորդ չէ յիշեցունել թէ Նոյէ Ֆրէյէ Բրէսէ լրագիրը «Քրէտի Անշթալտ» դրամատան բերան կը համարուի։

Դեկտ. 31ին վերջացող կիսամեակի մէջ, ծխախոտի Րէժիի հասոյթք 63,000 օսմ. ոսկւոյ հասած են։

Րէժիի վարչութիւնն իւր գաւառական գործակալաց շատերը Կ. Պոլիս կոչելով կը խորհրդակցի անոնց հետ գաւառային վարչութեանց մէջ ներմուծելի բարենորոգմանց վրայ։

Անգլ. դեսպանատան երկրորդ քարտուղար Գ. Պաքս Իրոնսայտ՝ որ արձակուրդով Եւրոպա կը գտնուէր, մայրաքաղաքս վերադարձաւ։

Վիճակագիր մը հաշուելու ըրած է որ 1886 (Ն. Տ.) ի սկիզբէն ի վեր քաղաքական լրագրաց մէջ ամենէն աւելի տպուած անունն էր Կատղան էֆէնտիի անունը։

Տասն օրուան մէջ, Թայմզ 683 անգամ տպած է օսմ. պատուիրակին անունը, մինչ մի և նոյն ժամանակամիջոցի մէջ 586 անգամ միայն շնորհած է այս պատիւը Պիզմարք իշխանին, 328 անգամ Լորտ Սալզպըրիի, և 267 անգամ Գ. տը Ֆրէսինէի։

Բայց դեռ աւելին կայ. Զուիցերիոյ լրագիր մը ամենայն լրջութեամբ կը պնդէ թէ Կատղան էֆէնտի բնիկ Ժընէվցի է և 1842ին մեկնած է յիշեալ քաղաքէն ի Սուրիա՝ ժամացոյցի վաճառականութեամբ ըզբաղելու համար. անդ, ճաշակ զգալով իրաւագիտութեան, այդ ճիւղի ուսմանց պարապած է։

Այս ենթադրութիւնք զարմանալի չեն թուիր անշուշտ, երբ յիշենք թէ նորութիւն մը դարձած է օրուան կարեւորութիւն ունեցող մարդոց ծննդավայրը խնդրոյ առարկայ ընել. դեռ վերջերս Իտալիոյ երեք քաղաքներ ստանձնել կուզէին Պուլկարիոյ իշխանին ծննդավայրն եղած լինելու պատիւը. վերջին Թուրքօ-ռուսական պատերազմի ժամանակ ալ Ամերիկայի լրագիրք կ'ենթադրէին թէ Ղազի Օսման փաշա Թեքսասցի է. իսկ Եւրոպիոյ լրագիրք կը պնդէին թէ Պլէվնայի յաղթողը նոյն ինքն Պազէն մարէջալն է....

Գալով Կատղան էֆէնտիի, ստուգապէս յայտնի է թէ նա բնիկ Սուրիացի է, արաբ ծնողէ ծնած և երբէք ոտք կոխած չէ հելվէտիական հողին վրայ կամ զբաղած ժամագործութեամբ։

ԱՆՕՆՆԿԱԼ

Մարդ մը, աղքատ թէ հարուստ լինի, չկրնար լաւագոյն պարգեւ մ'ունենալ քան երբ ընտիր կարի մեքենայ մը, մանաւանդ թէ մեքենայն գնուած է Սինկէրի գործարանին մթերանոցներէն որ տիեզերական համբաւ մ'ունի։ Այլ որովհետեւ այդ անուամբ ծախուած բազմաթիւ կեղծ մեքենայներ կան, դիմացկուն և հաստատ մեքենայ մ'ունենալու համար պէտք է դիմել այդ կարեւոր տան մթերանոցաց ի Պոլիս Մահմուտ փաշա 90, ի Ղալաթիա Վոյվոտա, Կլավանի խան, ի Բերա, Մեծ փողոց 208։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

ԱԺԱՆՍ ՀԱՎԱՍ

ՓԱՐԻԶ, 14 յունվար

Գ. Բօլ Պէռ, (Կամպեդդայի նախարարութեան մէջ Հանրային կրթութեան նախարար) Ֆրանսայի ընդհանուր գործակալ անուանեցաւ յԱննամ և ի Թոնքին։

ԱԺԱՆՍ ՌԷՈՒԹԷՐ

ԼՈՆՏՈՆ, 15 յունուար

Սըր Էտուարտ Թօրնթըն յառաջիկայ չորեքշաբթի օր Լոնտոնէն պիտի մեկնի ի Պոլիս։ Սըր Թօրնթըն այս օրերս երկար տեսակցութիւններ ունեցաւ Լորտ Սալզպըրիի հետ։

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 4 յունվար

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԷԹՂԹՈՑ

Օսմանեան Քօնսօլիտէ

	Դահեկան
Երէկ երկոյ գոց. (Միաց. D. Աէ.ի Դ. կ.)	15 41
Օրուայն գոցուելէն վերջը »	15 13
Բերայի մէջ »	— —
Առաւօտուն բացուելու »	15 09
Բարձրագոյն գին »	15 08
Նուազագոյն »	15 9
Կէս օրին	15 9
Փոխառութիւն 1858) 1862) Ա. Սէրի Դ. կ.	24
» 1860) » 1863) Բ. » Դ. կ. »	45
» 1872) » 1865) » 1869) C. » » » 1873)	15 9

ԻՒՆԻՖԻԷ ԵԳԻՊՏԱԿԱՆ

Երէկ իրիկուն գոցուելու	70 35
Այս առտու բացուելու Դ. կ.	70 30
Կէս օրին	70 30

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 15 Յունուար, ժամ 5 վայր. 15 երեկո

Անգլ. քօնսօլիտէ	100 3/16
Օսմ. » Սէրի Դ. բացուելու	13 15/16
» » » գոցուելու (*)	13 3/4
» » » Ա.	25 1/4
» » » Բ.	15 3/8
» » » Դ.	13 3/4
Օթօման 1871	67
Փոխառութիւն 1877	79 1/4
Պանք Օթօման	9 3/8
Ռուսական փոխառ. 1873	96 3/8
Եգիպտական միացեալ (իւնիֆիէ)	64 3/8
» առանձ. (բրիվիլէժիէ)	88 3/8
Տայրա Սանիէ	62 1/2
Տօմանիալ (փոխառ. Րօշիլտ)	89
Հունգարական պարտաթուղթ 4 0/0	— —
Փոխանակութիւն Բարիզի վրայ	25 424

Վիէննա, 15 Յունուար, ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	127 30
Օսմանեան երկաթուղի	17

Բարիզ, 15 Յունուար, ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0	110 50
» » 3 0/0	81 40
Օսմանեան քօնսօլիտէ Սէրի Դ. բացուելու	14 02 1/2
» » » գոցուելու	13 97 1/2
» » Սէրի Բ.	15 40
» » Դ.	13 90
Օսմանեան երկաթուղի	34 50
» Րէժիի բաժնեթուղթք	—
Պանք Օթօման	486 25
Գրէտի Լիօնէ	522 50
» Ֆօնսիէ	1335
Բաժնետառն Լիոնի	1270
Սուեզի ջրանցք	2198 75
Ռուսական 5 0/0 1877ի	100
Իտալական Ռանթ	96 47 1/2
Եգիպտական միացեալ	326 25
Սպանիական (արտաքին)	53 3/4
Բրիօրիթէ Թիւրք	344 75
5 0/0 Հելլենական	253 75
Չէք Լոնտրայի վրայ	25 23

ԲԱՐԻԶ ՓԹԻԹ ՊՈՒՐՍ

Բարիզ, 15 Յունուար, ժ. 10 վ. 30 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0	110 50
Օսմանեան քօնսօլիտէ Սէրի Դ	14
Եգիպտական	326 25

ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

ՄԱԿԱՐ ԾԱՌԱՅ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ, Գերապատիւ Առաջնորդի վիճակին Հայոց . . . Սրբազան . . . եպիսկոպոսի և համօրէն ընդ տեսչութեան Ձերով գտեալ դասուց բարեշնորհ վարդապետաց, բարեկրօն աւագ երիցանց, հոգեւէր քահանայից, շնորհունակ սարկաւագաց, սրբասուն դպրաց և կղերիկոսաց, աստուածասէր իշխանաց, քաջազգի պայազատաց, բարեծնունդ աստիճանաւորաց, պատուելի ազնուականաց, մեծարոյ քաղաքացեաց, բազմափորձ վաճառականաց, ճարտարամիտ արհեստաւորաց, արդարավաստակ երկրագործաց, հաւատարիմ գանձապետաց, ժրաջան երեսփոխանաց, ջանասէր հոգաբարձուաց, արդիւնական ուսուցչաց և աշակերտելոց նոցին և ամենայն չափու հասակի հաւատով ի Քրիստոս զարգացեալ որդւոց Մօրն Լուսոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի, արանց և կանանց, ծերոց և տղայոց, կուսից և երիտասարդաց Յիսուսաւանդ սուրբ ողջունիւ խնդա՛լ ի Տէր:

Շնորհք, սէր, խաղաղութիւն, բարութիւն և ողորմութիւն Ամենասուրբ Երրորդութեանն՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ և լուսացնցուղ հովանի Մեծի Տաճարիս Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի և պահպանողական զօրութիւն Աստուածամուխ Գեղարդեան, օրհնութիւն շնորհաբաշխ Աջոյ բազմավաստակ Նահատակին Քրիստոսի Սրբոյն Գրիգորի Հայաստանեայցս Լուսաւորչի և տեւողական նշխարաց սրբոց և համօրէն հրաշափառ սրբութեանց գանձելոց ի ծոց Մայր Տաճարիս տարրասցին, տարածեսցին և ծաւալեսցին ի վերայ հոգւոց և մարմնոց ձերոց և ի վերայ որդւոց և դստերաց ձերոց սիրելեաց մերոց ի Քրիստոս Յիսուս:

Ընդ Յիսուսաւանդ ողջոյնիս և Հայրապետական օրհնութեանցս ծանուցանեմք համայնից անձկալի զաւակացդ մերոց, թէ՝ անդստին ի տղայական տիոց ուխտեալ գոլով նուիրել զանձն մեր ի սպասաւորութիւն Բանին Աստուծոյ և ի սեղանաւորութիւն շնորհաց Հոգւոյն զկախման կենաց, չեղեւ մեզ մարթ խո՛յս տալ ի պաշտամանէն զոր Ազգն և Եկեղեցին եդ ի վերայ մեր Համազգական ընտրութեամբ իւրով ըստ հաճոյից անհասանելի կամացն Աստուծոյ, գիտելով չափ զապիկարութիւն և զտկարութիւն մարմնոյ, հոգւոյ և մտաց մերոց և զսրբութիւն և զմեծութիւն առաքելութեանս այսորիկ, նաեւ զծանրութիւն աստիճանիս, մանաւանդ յայսպիսում խրթնացեալ ժամանակի, թո՛ղ զի և երկնչէաք իսկ յանհնազանդութեանն դատաստանէ ըստ գրեցելոյն «Որդի անհնազանդ ի կորուստ եղիցի» և խրախուսէաք եւս յԱստուածայնոյն առ Առաքեալն բան թէ՝ «Զօրութիւն իմ ի տկարութեան կատարի». ուստի և պնդեալ զմէջս հաւատոյ մերոյ և հնազանդեալ կամաց Ամենախնամ Արարչին մեր ամենեցուն, որ գիտէ լցուցանել զպէտս մեր և զկարիս առաւել քան զոր խնդրեմք և իմանամք՝ Օծութեամբ՝ Իւղոյն Սրբութեան ամբարձաք ի Հայրապետական Աթոռ Երջանկայիշատակ նախորդաց մերոց հաւատալով՝ թէ արժանահայց աղօթիւք ուխտի քահանայութեան և ժողովրդոց, սիրելի որդւոցդ մերոց, Քահանայապետն Երկնաւոր հասանել ունիցի ի թիկունս տկարութեան մերոյ, որպէս երբեմն Մովսիսի և Ահարոնի զմեծամեծս հրաշագործեաց յԵգիպտոսն անհաւանութեան առ Իսրայելեան ժողովուրդ որպէս զի զառաջիկայ մեծ գործ և պաշտօն տնտեսութեան Կաթուղիկէ Ընդհանրական Եկեղեցւոյ և զհովուութիւն բանաւոր Հօտին Քրիստոսի և զառաջնորդութեանն օրինակ առաջնորդելոցն առ Աստուած, ուղիղ և անմոլար, ըստ Աստուածային պատուիրանացն և աւետարանոց բարեաց օրինակացն, կատարեսցուք և ընդ ճանապարհ Երանելի և Առաքելապատիւ նախորդացն մերոց թեւակոխեսցուք, որպէս վայել է և հաճոյ կամաց ամենակալ Հոգւոյն բարութեան, խաղաղութեան, քաղցրութեան, սիրոյ, համբերութեան և երկայնմտութեան:

Այսպէս ուրեմն կատարեալ մեր զգործ հրամանին, որ ազդեցաւ մեզ ի վերուստ և տարածեալ զանձն մեր առաջի բազմամոլորմ գթութեանցն Աստուծոյ ի մէջ Տաճարիս և առաջի Աստուածընկալ Սուրբ Նշանաց և սրբութեանց ի ծոց Սորին գանձելոց, մաղթեցաք և մաղթեմք ջերմագին սրտիւ, զի Ամենակարողն Աստուած անփորձ և անսասան պահպանեսցէ զձեզ ամենեսին, զսիրելի որդեակսդ մեր. լուսաւորեսցէ զաչս հոգւոց և մարմնոց ձերոց և սրբեսցէ զմիտս և զխորհուրդս ձեր աչիւն Աստուծոյ, հանգուցանելով ի վերայ ձեր յազգաց յազգս զլիութիւն շնորհաց Հոգւոյն Սրբոյ՝ առ ի կարող լինել ի միտ առնուլ զհաճոյսն Աստուծոյ և ի նոյն խորհել միշտ և նոքօք առաւելուլ և փառաւորիլ ի յաւիտեանս. ամէն:

Եւ արդ, որովհետեւ գլուխ առանց մարմնոյ յարմարութեան ո՛չ կարէ կրել զկենդանութիւն և ո՛չ մարմինն առանց գլխոյ, որպէս և հաւատք առանց գործոց և գործք առանց հաւատոյ մեռեալք են, ըստ առաքելոյն բանի, կամիմք ապա, յետ ընծայութեան Տիրական ողջունիս և Հայրապետական օրհնութեանցս ևս և հարեւանցիկ յիշատակութեան ամբարձման մերոյ ի բարձրապատիւ Գահ Հայրապետութեան Հայոց մեծաց՝ հրաւէր սիրոյ, միութեան և գործակցութեան և բանս խրատականս կարդալ՝ նախ՝ զառաջինն առ Սրբազան Արքեպիսկոպոսունս եւ Եպիսկոպոսունս՝ Ազգիս, որք են տեսուչք կարգեալք յԱստուծոյ հոգւոց հաւատացելոց՝ որ են յաշխարհի: Վասն այնորիկ գթութեամբն Աստուծոյ աղաչեմք զձեզ զամենեսին զՍրբազան Եղբարսդ մեր ի Քրիստոս, զի անմոռաց ունելով ի մտի զգործ և զբարձրութիւն աստիճանի ձերոյ, որպէս զգէտ աննիրհ՝ աչօք մտաց հսկեսջիք ի վերայ ամենեցուն քահանայից և ժողովրդոց՝ որոց գլուխ համարիք և հրամանատարք, հոգ մեծ ունիջիք ի վերայ անտխեղծ և անարատ պահպանութեան ուղղափառ դաւանութեան հաւատոյն ի Քրիստոս ըստ հնադարեան աւանդութեանց ո՛չ թոյլատրելով զի և նշանախեց մի անգամ փոփոխեսցի ի նմին և պէս պէս նորաձեւութիւնք ի ներքս յեկեղեցի և յեկեղեցական կարգս, արարողութիւնս և ծէսս մեր սպրդեսցեն. զարդարութիւն, զգիտութիւն և զխոնարհութիւն և զշրջահայեցութիւն նեցուկս համարեսջիք իշխանական իրաւանց ձերոց յեկեղեցական հրապարակի. մի՛ երբեք զանարժանս յառաջ կոչեսջիք յԱստուածայնոցն սպասաւորութիւն ի կորուստ կոչողացն և կոչեցելոցն և մի՛ զարժանաւորս յետս կացուցանիջիք, այլ արդարութեամբ զննեսջիք յընտրելն և ի կարգելն զպաշտօնեայս ի սպասաւորութիւն եկեղեցեաց՝ յանայլմաք ուսմունս, ի բարի վարս, յանխեղծ քաղաքականութիւնս և յԱւետարանական հեզութիւնս նոցին լեալք ուշադիր՝ քան ի թախանձանս անկշռադատ ամբոխին կամ յապահով դիրս միջնորդաց նոցին: Ըստ նմին օրինակի արդարութեան վարեսջիք և յառաջարկելն մեզ ի վարձատրել զստորադրեալ պաշտօնեայս եկեղեցւոյ, մի՛ սոսկ զպարտուց կատարումն արժանաւոր ճանաչեալ պարգեւաց, այլ անդր քան զպաշտօնսն առաքինութիւնս ի գործս բարգաւաճման եկեղեցական և Դպրոցական արդեանց, յարծարծմունս բարեպաշտական սովորութեանց նախնեաց ի հաւատացեալսն և այլն. վերակացու լերուք Բանին վարդապետութեան յուսուցանել, գիտել և սպասաւորել Աստուածային օրինացն քարոզութեանց, ողջամիտ մխիթարեսջիք և զհակառակողսն և զստահակեալսն հաւատոյն բանի և օրինաց Աստուծոյ և աւանդութեանց եկեղեցւոյ ըմբերանեսջիք Աստուածային գիտութեամբն՝ կամ անձամբ կանխելով ի կարեւոր հրահանգս և կամ առնելով ձեզ յօգնականութիւն զշնորհունակ և զժրաջան վարդապետս. հսկեսջիք արթնութեամբ և ի վերայ բարեկարգութեանց եկեղեցեաց, վանօրէից, դպրոցաց և այլոց հոգեւոր և աստուածահաճոյ հաստատութեանց, ևս և կանոնաւոր հաշուեվարութեանց մտից և ծախուց նոցին. ուսուսջիք իւրաքանչիւր ումեք ստորադրեալ պաշտօնավարաց արթուն լինել ի պարտս պաշտամանց իւրեանց: Սիրեցէ՛ք և ուսուցէ՛ք պաշտել զօրէնս և զսահմանադրեալ կարգս և կանոնս ևս և զազգաշէն և զեկեղեցաշէն հրամանս, որք ի Մայր Աթոռոյս՝ իբրեւ ի շտեմարանէ Աստուածային շնորհաց առ ձեզ և առ նոսա արտափայլեսցին. աշխատ լերուք տալ կրթել և զարգացուցանել զհայազգի մատաղ սերունդն ի կրօնական և ի բարոյական գիտելիս և զժողովուրդն յաստուածպաշտութեան՝ յառաքինական վարս ի յանխզելի հաւատարմութեան առ Մայրս մեր Ս. Կաթուղիկէ Էջմիածին. առանձին խնամօք փոյթ ունիջիք բարւոքել զտնտեսական կառավարութիւն եկեղեցական, վանական և դպրոցական կալուածոց և զկառավարութիւն նոցին յանձնեսջիք ի ձեռս հաւատարմութեամբ և գործունէութեամբ վկայեալ հոգեւորական և աշխարհական անձանց և պատրա՛ստ լերուք միշտ ի գործ հոգեւոր հովուութեան ձերոյ, որպէս զի համարձակութեամբ և պարզերես կացջիք առաջի աւանդողին ձեզ զաւանդ պատուիրանին, տալով նմա զհամար շահիցն կրկնապատիկ յաւելուածով:

Դարձեալ հակիրճ բանիւք և առ դասս սրբանուէր կրօնաւորացդ և վանական եղբայրութեանց յանապատս և ի վանօրէս զնշխարին և զկենօտոնին յիշատակելով ձեզ զվարս ճգնողականս: Զհաւատարմութիւն խնամոց ի կերակուրս, յագանելիս և ի բնակարանս ունիջիք առ համօրէն վանականս՝ արգահատելով մանաւանդ ի կարիս բազմավաստակ ծերունեաց: Զժուժկալութիւն սիրեցէք և վայելչութեամբ մենաստանին խնդացեալ բերկրեսջիք՝ քան շատաշրջիկութեամբ ի հրապարակս քաղաքաց և աւանաց: Զխստաւորս և զպտղաբերս մարմնաւոր պատարագաց ի դիւրութիւն ուխտին՝ խրատականաւ շահեցէ՛ք բանիւ և պարկեշտութեամբ առաջի երեսաց նոցին ընթացէ՛ք ի պատիւ և ի գովեստ հնաւանդ սահմանադրութեան մենաւոր կենաց: Աղօթից, սաղմոսերգութեանց և հանապազօրեան ժամերգութեանց սեւեռ կացէք, որպէս այր իւրաքանչիւր ի ձենջ հրապարակաւ ուխտեալ է առաջի Յաւիտենականին, որպէս զի վարձս բարիս ընկալջիք ի Քահանայապետէն յաւիտենից ի Քրիստոսէ Յիսուսէ Տեառնէ մերմէ:

Բարեկրօն քահանայիցդ դասու ևս կարդամք զհրաւէր զգաստութեան. մի՛ այլ ևս առաջնովք վարիլ անփութութեամբ և անտարբերութեամբ. բացէ՛ք զաչս մտաց ձերոց՝ ծանուցէք զզօրութիւն երկնային գործոյդ՝ յոր հրաւիրեալ կոչեցայք ի նուիրել զամենայն Հոգւոյն Աստուծոյ. մի՛ խուք պատճառս տայք արատոյ անկանել ի պաշտօնդ ձեր ըստ Առաքելոյն խրատու, այլ ըստ անուան ձերոյ և ըստ կոչման իբրեւ զհարս և զծնողս ժողովրդեան ձերոյ յամենայն ժամ տա՛յք նոցա զհոգեւոր խրատս, միշտ ուսուցանելով, զգուշացուցանելով, և յորդորելով յաստուածայինս. մի՛ երբեք թուլանայք ի պարտս պաշտաման ձերոյ, այլ մաքուր հոգւով, սուրբ սրտիւ, հաւատով և յուսով մեծաւ սպասաւորեցէք Աստուածային խորհրդոցն և փառաւոր արարէք զԱստուած՝ պայծառացուցանելով զեկեղեցի սուրբ մշտամբռունչ աղօթիւք ձերովք և արիաբար և յօժարամիտ սրտիւ, առանց ծուլութեան զկանոնեալ սահմանս աղօթից սրբոց Հարցն անթերի կատարեցէք ըստ իւրաքանչիւր ժամու. փո՛յթ ունիջիք հնազանդ գտանիլ իշխանաւորաց ձերոց և կատարել սրբութեամբ զաւանդեալ ձեզ պատուիրանս. սիրեցէ՛ք և պաշտեցէ՛ք միշտ զսուրբ և զանարատ կեանս և ձերով սրբակրօն գնացիւք օրինակ բարի հանդիսացէ՛ք ձեզ հաւատացեալ Հօտին Քրիստոսի, զի ա՛յն է բարի և ընդունելի առաջի Աստուծոյ:

Ուղղեսցո՛ւք այսուհետեւ զխրատ բանից մերոց առ ժողովրդականսդ, սիրելի որդիսդ մեր ըստ հոգւոյ: Խրատեմք և յորդորեմք զամենեսին զձեզ ունել ձեզ առաջնորդ վարուց ձերոց զԱստուածաւանդ պատուէրս Սուրբ Գրոց, սիրել զեղբայրսիրութիւն, պաշտել սրբութեամբ զԱստուած և զեկեղեցական պաշտամունս, խնամել զաղքատս, զորբս, զանկեալս և զայրիս, հեռի՛ կալ ի դատարկութենէ, յաճախել ի սուրբ եկեղեցի և կրթել զանձինս ձեր ի բարոյական և ի կրօնական գիտելիս հաւատոյ: Խնայեցէ՛ք և զգաստ լերուք յամենայն խրախճանութիւնս և ի հացկերոյթս, զի մի՛ ի հեշտասիրութեանց ապականեսցին վարք և բարք ձեր. զհայրենաւանդ սովորութիւնս մեծարելի ունիջիք և մի՛ տարուբերիք ի յորձանս անփրկանաւոր նորասիրութեանց. զուսումն գիտութեանց, զառաքինութիւն և զճշմարիտ Աստուածպաշտութիւն մեծ և գերազանց քան զամենայն ճոխութիւնս համարեցէ՛ք, զի մի՛ յունայնութիւն և յերազախաբ յաջողուածս յուսայջիք՝ այլ ի Հայրն երկնաւոր, որ միօրինակ զխնամ ունի զամենեցուն կենաց: Ջանացարուք օր ըստ օրէ զաստուածահաճոյ հասարակական հաստատութիւնսդ, զվանօրէս, ասեմ, զեկեղեցիս, զդպրոցս, զաղքատանոցս, զհիւանդանոցս և զայլս, մարդասիրաբար շքեղացուցէք յարդարել ի ներքուստ և յարտաքուստ. զարդարութիւն և զճշմարտութիւն յամենայն ի գործառնութիւնս ձեր, սիրեցէ՛ք զիշխանաւորս ձեր և զԱռաջնորդս պատուեցէ՛ք, զի հնազանդութիւնն է գլուխ ամենայն բարեաց. զորդեակս ձեր երկիւղիւն Աստուծոյ սնուցէ՛ք և դաստիարակեցէ՛ք զի ի մանկութեան ժամանակի առաւել տպաւորեսցին խրատք ձեր ի միտս նոցա անջնջելի յիշատակաւ՝ ընդ որում վարձս բարեաց ընկալջիք փոխարէն ի Տեառնէ: Իսկ և կանանցդ դասու պատուէր Հայրական տամք հնազանդ լինել արանց ձերոց իբրեւ գլխոց ձերոց, սիրել զամօթխածութիւն, և զպարկեշտութիւն յամենայնի ի գնացս ձեր և զտնտեսութիւն ի տան ձերում. հեռի կալ զարդասիրութեանց, ի պչրանաց և ի նորասիրութեանց՝ գիտելով՝ զի վայելչութիւնն առաւել ի պարզասիրութեան փայլի, մանաւանդ հոգ մեծ ունիլ ի խնամել, կրթել և ի դաստիարակել զորդիս ձեր և զդստերս և աչալուրջ հսկողութեամբ զարգացուցանել զնոսա բարոյական գեղեցիկ յատկութեամբք, որով և արքայութեանն լիցիջիք ժառանգորդք ի Քրիստոս Յիսուս:

Այսքանեաւ առ ժամս բաւականացեալ յորդորական՝ ապառնեաց թողումք աւուրց զհարկաւորս մանրամասն աւանդել և ի նուիրական սրբավայրիս Իջման Աստուածորդւոյն խոնարհեալ յաղերս մաղթանաց խնդրուածովք դառնամք առ Արարչապետն Տիեզերաց՝ պահպանել զամենեսին զձեզ անփորձ և անսասան յերեւելի և յաներեւոյթ փորձութեանց, պարգեւել ձեզ զանվրէպ ճանաչումն բարւոյ և զտեւական յօժարութիւնս ընթանալ ընդ ուղիղն առաքինութեան, որպէս զի բարեպաշտական վարուք և առաքինասէր գործովք կեցեալ յայսմ աշխարհի երկնից արքայութեան լիջիք ժառանգորդք՝ շնորհօք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի. ամէն:

Գրեցաւ անդրանիկ կոնդակս օրհնութեան ի Մայր Աթոռ ի Ս. Էջմիածին յամի տեառն 1885 ի Նոյեմբեր 10. և յազգային թուաբերութեան մերում ՌՅԼԵ:

Համար 49.

ՄԱԿԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ «ԱՐԵՒԵԼՔ Ի»

ՏԱՂԱՆԴԱՒՈՐ ՔՍԱԿԱՀԱՏ ՄԸ

ՈՒՍԹՐԸ, 25 դեկտ. 1885

Այս անգամ քսակահատ՝ գեղեցիկ աչքերով, թուխ մազերով, միջահասակ, ուսումնական և բանաստեղծ տիկին մ՚է, հազիւ 36 տարեկան: Թողումք որ ինքը խօսի, ինչպէս որ գրած ունի իւր օրագրութեան մէջ. օրագրութիւն՝ որ 72 քառածալ երեսէ բաղկացեալ և անընթեռնլի լինելու չափ մանր գիրերով շարադրուած գրութիւն մ՚է: Տեսէք ինչ կ՚ըսէ տիկինը իւր օրագրութեան մէջ. «Ամուսնոյս մահուանէ վերջ երբ բոլորովին առանձին մնացի այս ընդարձակ աշխարհի մէջ, առանց բարեկամի և առանց ծանօթի, օր մը, չարագուշակ օր մը՛ վարպետիս նախատական յանդիմանութեանց չկարենալով հանդուրժել, գործարանէն դուրս նետուեցայ, առանց գիտնալու թէ ի՛նչ կ՚ըլլէի և կամ ի՛նչ պիտի ըլլէի: Աշխատութեանս շաբաթական վարձքը, որ երբեք 6 տոլարէ աւելի եղած չէր, առանց վարպետիս իմաց տալու գործարանէն մեկնած լինելուս պատճառաւ մերժեցին վճարել ինձ այս անգամ. հետեւեալ նոյն օր առանց դրամի և առանց գործի խցիկս մտայ, ուր պատառ մը հաց և աման մը ջուր միայն կար . . . : Հետեւեալ առաւօտ պարզապէս երկու խնդիր կար լուծելու. մին՝ աւազակութիւն ընել, միւսը՝ պատիւս վաճառել: Աւազակը խստիւ կը պատժուին գիւղէն, իսկ անպատիւ կանայք կը քշուերուին. ուստի ինձ կը մնար որոշել թէ գո՞ղ մը թէ պոռնիկ մը լինելու էի: Առաջինը ընտրեցի ես: Հոն արկածներ չկային պակսէին ինձ, և դուցէ օր մը ձերբակալուելով պատժուելու տեղիս, վիճակս պիտի բարւոքէր ի շնորհս այն զգաստարանաց և քաւարանաց, որոնց համար ազգը և քաղաքը միլիոններ կը վատնէ ժողովրդեան բարոյականը կազմակերպելու . . . : 1883 օգոստոսի 17րդ օրը, կենացս մէջ նշանաւոր օր մը պիտի լինի. զի այսօր իսկ պիտի սկսիմ գողնալ. երկու օրէ ի վեր քաղցս յագեցնելու համար ստամոքսիս մէջ պաղ ջուրէ ի զատ ոչինչ մտած է: Գողնա՞մ, թէ քաղցէս մեռնիմ. ո՛չ, պիտի գողնամ, ինչ որ ալ ըլլայ հետեւութիւնը . . . :» Արդարեւ սոյն օր տիկինը խանութ մը կը մտնէ և 25 սանթիմ արժողութիւն ունեցող առարկայ մը գողնալ փորձած միջոցին կը ձերբակալուի և կը բանտարկուի. հետեւեալ օր դատաւորն կը տանին զինքը իբր պարզ գող և երեք ամիս բանտարկութեան կը դատապարտուի: Հոս ալ թողումք որ ինքը խօսի իւր վիճակին վերայ:

«Բա՛նտ, ինչ սխուր անուն, և ի՛նչ զզուելի հենական օթեւան: Բանտապետը, տեսուչք և վերակացուք բոլորն ալ լիրբ, ամբարտաւան, անբարոյական և ներգմաւոր անձինք. կամ ուրիշ խօսքով, երկրին մարդասպանները, աւազակները, քսակահատները և ն. առանց բոլորն ալ խնամօք ընտրուած, միայն դու տեսուչ լինելու ես, միւսին՝ դու բանտապահ լինելու ես և ուրիշի մ՚ալ դու կրօնական պաշտամունք կատարելով բանտարկեալները մխիթարելու ես ըսած են. ահա այսչափ միայն, ոչ ոչ մասնագէտ է հոս, բոլորն ալ որկոր, որկորներ բարեկարգելու պաշտօն ստանձնած որկորներ, ասկէ աւելի ծաղրելի տրամաբանութիւն լուած է միթէ. ճշմարտութիւնը այս է սակայն»: Մեր բանաստեղծ տիկինը երեք ամիս բանտարկելութիւնը աւարտելով ազատ կը թողուի և Պոսթոնի շրջականները երկու սենեակ կը վարձէ, մէկ քանի օրէն սենեակներու վարձքը կը վճարեմ ըսելով: Եւ իրօք շաբաթ մը վերջը սկսելով երկու տարիէ աւելի ժամանակ կանոնաւոր կը վճարէ տանտիրոջ պահանջը: Տիկինը պարկեշտ, բարեպաշտ և զգաստ, միանգամայն զուարճախօս գոլով, տանտիրոջ ընտանեաց սիրելի եղած էր. մանաւանդ առաւօտներն ուշ կ՚ելնէր, քիչ կուտէր, կէս օրէն մինչեւ երեք ժամ վերջ սենեակին մէջ գոցուած կը գրէր և յետոյ դուրս ելնելով գիշերուան 8-9 ժամուն տուն կը դառնար: Ինչ գործով կ՚զբաղէր տիկինը, ոչ ոք գիտէր, և երբեք չպիտի գիտցուէր եթէ այս օրերս տան տէրը իւր տունը թողելով ուրիշ տուն մը փոխադրուելու չըլլար: Կ՚երեւնայ թէ տիկինը երկու ամիսէ ի վեր տուն եկած չէր, թէեւ տանտէրը չէր գիտեր թէ ուր գնացած էր և թէ ինչ պատճառաւ թողած էր իւր սենեակները որոնք ամուր գոցուած էին, և տան տէրը կը կարծէր և կը հաւատար թէ՝ անկողին մը և սնտուկ մը միայն էին սենեակներու կահոյքը: Ինչ որ է տան տէրը ճարահատ ոստիկանութեան կը դիմէ և իմաց կուտայ թէ ինքը տեղափոխութիւն ընել ստիպուած ըլլալով իւր վարձակալը ինչ որ ունի պէտք է որ իրենք (ոստիկանութիւնը) ապահով տեղ մը դնեն մինչեւ տիկնոջ վերադարձը: Պահանջը օրինաւոր ըլլալով ոստիկանութիւնը պաշտօնեայ մը կը խրկէ որպէս զի քննելով տեղեկագրէ թէ ինչ կարասի կայ սենեակներու մէջ, և ահա հոս կ՚սկսի մեր տաղանդաւոր քսակահատ տիկնոջ հետաքրքրական պատմութիւնը: Ոստիկանը ի ներկայութեան տան տիրոջ սենեակներու դուռները բանալով երբ ներս կը մտնէ . . . «պարզապէս համաշխարհային արուեստահանդէս մը ներկայացաւ մեր աչաց առջեւ» կ՚ըսէ լրագրոյ խմբագիր մը որ կ՚ընկերանար ոստիկանին: Ամենաթանկագին ադամանդեայ մատանիներէ, ոսկի օղակներէ, թաշկեայ, մետաքսեայ և ոսկեզօծ կերպասներէ սկսելով մինչեւ ամենաչնչին լուցկի տուփեր հարիւրներով և հազարներով և խառն ի խուռն դիզուած էին հոն, կ՚ըսէ նոյն հեղինակութիւնը, և ստորեւ կը դնէ ձեռք բերուած նիւթերու ցանկը զոր իբրեւ հետաքրքրական ինչ կը թարգմանեմք. 17 դրամապանակ որոնց մէջ գտնուած դրամներու ամենամեծ գումարն էր 108, իսկ ամենափոքր գումարն 2 տոլար ութը սէնթ, համագումար պատրաստ դրամ 408 տոլար. ադամանդեայ մատանի 18. ադամանդեայ օղ 41. զմրուխտ մատանի 11. ոսկի մատանի 107. ոսկի ժամացոյց 28. արծաթեայ ժամացոյց 73. ոսկի ապարանջաններ 24. արծաթեայ ապարանջաններ 8. 205 ոսկեայ կոճակներ. 250 կրամի չափ մարգարիտ. 218 կանգուն թաշկեայ, մետաքսեայ և այլ կտաւեղէնք. 91 կտոր օճառ. 40 տուփ լուցկի. երկու տոպրակ ալիւր. 100 լիտրի չափ շաքար ևն ևն: Մեր նամակը շատ չերկարելու նպատակաւ նիւթերու ցանկը համառօտեցինք, սակայն անկարելի է մէկ քանի տեղեկութիւն չտալ քսակահատ տիկնոջ օրագրութեան մէջ յիշուած մէկ քանի հետաքրքրական ծանօթութեանց մասին որոնք պիտի ապացուցանեն թէ քսակահատը որչափ ճարպիկութեամբ կը գործէր և սաօրեայ գործողութեանց նկարագրութիւնը ճշդիւ կ՚անցունէր օրագրութեան մէջ թուական, ժամանակ, փողոցի և խանութի անուններն ալ յիշելով. օրինակի համար. «1883 նոյեմբեր 18 կէս օրէն 5 ժամ վերջը մտայ . . . խանութը . . . փողոց, թիթեղէ տուփ մը առի, նոյն տուփը . . . նպարավաճառին տարի որ քարիւղ լեցնէ. մինչդեռ նա իւղը կը լեցնէր ես չորս տուփ «օդաջ» առի դուրս ելայ: Յիմար հարուստ տիկին մը մետաքսեղէններ քննած միջոցին ես իւր քսակը առի և իւր դրամով իւր քովը իսկ առեւտուր ընելու պատրուակաւ երկու ծրար կտաւ վերցուցի: Լրտես մը տեսաւ գողնալս և ուզեց ձերբակալել զիս. կորսուէ՛ սրիկայ, ըսի, ինչպէս կը համարձակիս պատուաւոր տիկին մը ամբաստանել . . . լրտեսը ահաբեկ փախաւ քովէս . . . : 1883 դեկտ. 25. Ծնունդ է. ի՛նչ գեղեցիկ օր մ՚է այս և ի՛նչ յուսալից կը մեկնիմ սենեկէս: Երեկոյին . . . շատ ուրախ եմ. լաւ Ծնունդ մ՚ըրի. կոյր խանութպաններ և կոյր յաճախորդներ միայն գտայ այսօր. լրտեսք չճանաչեցին զիս, որովհետեւ մօրուսաւոր էի. վաղը պիտի հանեմ մօրուքս և միայն պեխերով պիտի գնամ: 1884 փետրուար 18. ոստիկանութեան տեսուչը կարծեմ ճանչցաւ զիս. մէկ քանի անգամ դէմս ելաւ և զգուշութեամբ զիս դիտեց. իւր վերայ յարձակելու պէս մօտեցայ իրեն. ի՛նչ կը փափաքիք, հարցուցի. կրնա՞մ ձեզ օգնել ձեր հետաքրքրութիւնը յագեցնելու համար, յարեցի. ոչինչ պատասխանեց: Նոյն ատենը ես չորս հինգ տոլարի կողոպուտ ըրի, հակառակ տեսչին . . . : 1884 մարտ 3. անձրեւ կուգայ. ա՛հ առանձին եմ, բոլորովին առանձին. ոչ ոք սիրէ զիս: Հարուստ եմ և աւելի պիտի հարստանամ. բայց որո՞ւ համար. ինձ չափ ուսմունք առած քսակահատ մը կը գտնուի՞ արդեօք. ո՛հ, ընկերի մը պէտքը կ՚զգամ. ցաւերուս ցաւակից, ուրախութեանս խնդակից ընկեր մը (ամուսին հասկցիր): Բայց սրիկաներու հետ ընկերակցիլ կարող չեմ. նոքա մէկ տարուան մէջ քանիցս կը դատապարտուին. իսկ ես յաւիտեան չպիտի ձերբակալուիմ. որովհետեւ բժիշկ չունիմ որ մտնէ զիս . . . : Դարձեալ ճաշեցի երեք տոլարի փառաւոր պանդոկը, առանց սակայն վճարելու: Այսօր առաջին անգամ հինգ սէնթ վճարեցի Նիւ-Եօրքի կառքին, ահա տասն և ութ ամիսէ ի վեր ձրի կերթեւեկէի սոյն կառքերով: Այսօր ապուշ մը թալեցի հետեւեալ կերպով. Դրամապանակն և նամակ մը ի ձեռին տիկին մը Պոսթոնի նամակատունը հարցուց ինձ. կը ըսէ՞ս ինձ. ի՛նչ յիմարութիւն. Բարի, նամակատան ուղիղ ճանապարհը ցոյց տալէս վերջը խրատեցի տիկնոջ թէ զգոյշ ըլլայ քիչ մը. զի քաղաքին փողոցները քսակահատներով լի են, ըսի: «Անհոգ եղիր, տիկին, անհոգ եղիր» պատասխանեց յիմարը և նոյն վայրկենին ես խլեցի իւր քսակը առանց ինքը գիտնալու թէ ո՛վ էր գողը: Բոլորովին սպառիչնութեամբ մխիթարեցի զինքը, և այս առթիւ տեղեկացայ թէ ուրիշ դրամ ևս ունի իւր գրպանը: Անկարելի է բաժնուիլ իրմէ առանց զայն ևս գողնալու, ուստի, ընկերացայ իրեն մինչեւ . . . խանութը և հոն ձեռք անցուցի կողոպուտը և մեկնեցայ:» Կարծեմք ալ անօգուտ է այս ճարպիկ քսակահատի օրագրութենէն քաղուածներ ընել. թէեւ սոյն օրագրութիւն լի է հետաքրքրական արկածներով մեր տուած օրինակները տիկնոջ գործունէութիւնն և յաջողութիւններն ապացուցանել կը բաւեն. աւելցնեմք սակայն թէ շատ անգամ կը յիշէ հեղինակութիւն մը իւր օրագրութեան մէջ, որուն վրայօք ալ տեղեկութիւն տալով վերջացնեմ նամակս «Թէ ինչպէս քսակահատ եղայ ես», այս է հեղինակութեան հնչուն անունը, «զոր ամեն օր կամ երկաթուղիներու կայարաններու մէջ կամ իմ խուցիս մէջ կը շարադրէի» կ՚ըսէ տիկինը. Սոյն ձեռագիրն ստանալու համար հրատարակիչ մը երկու հազար տոլար կ՚առաջարկէ ոստիկանութեան. մինչեւ ցարդ անյաջող եղած է սակայն: Տիկինը օր մը խանութի մը մէջ գողութիւն ընել փորձած միջոցին ձերբակալուելով վեցամսեայ բանտարկելութեան դատապարտուած ըլլալուն պատճառաւ էր որ իւր սենեակներէ դուրս մնացած էր, և իւր բանտը եղած միջոցին էր որ, ինչպէս վերը ըսինք, իւր տան տիրոջ տունէն ելնելուն պատճառաւ ամեն ինչ երեւան ելաւ, եթէ ոչ երբեք չպիտի գիտցուէր այս ճարպիկ քսակահատի պատմութիւնը: Այժմ, որ բանտարկեալ է քսակահատ տիկինը, ոստիկանութիւնը միջոցներ ձեռք առած է սոյն օրինակ եղելութիւններ չպատահելու մասին. միանգամայն երեւելի բժիշկներ խրկելով քննել տուած է թէ տիկին քսակահատը պարզ «քլէփթօմանիա» (գողամոլութիւն) ունի, և այս ալ քիչ մխիթարութիւն չէ յիսուն հազար տոլարի չափ զանազան ապրանքներէ զրկուած ժողովրդեան համար:

Մ. ԹՕՓՃԱՆԷԼԵԱՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Դպրոցական մը որչափ բարոյապէս զարգանայ, իրօք՝ այնչափ աւելի կը բազմապատկի երախտագիտական բուռն զգացումներն առ բարերարս իւր. վասնզի սոցա շնորհիւ միայն կարող եղած է ուսման ճաշակն առնուլ: Արդ ես՝ որ Միաց. Ընկերութեան Հաճնոյ վարժարանին նախկին սաներէն ըլլալով՝ բժշկական արհեստ ուսանելու նպատակաւ ի Կ. Պոլիս եկած և այժմ Կայս. Բժշ. վարժարանը յաճախելու բաղդն ունիմ, չեմ կարող մոռնալ որ սա՛ յիշեալ Ազգօգուտ Ընկերութեան կողմանէ ինձ տրուած դաստիարակութեան արդիւնքն է:

Առ այս՝ կը փութամ Նոր Տարւոյ առթիւ այս անգամ ևս հրապարակաւ իմ խորին երախտագիտութիւնս յայտնել Միաց. Ընկերութեանց՝ որ նպատակ ունին միայն գաւառացի հայ պատանեաց մտքերուն մէջ ուսման ճաշակը տալ և սրտերուն մէջ յառաջդիմութեան ոգին արծարծել:

ՍՏԵՓԱՆ Թ. ԹԵՐՁԵԱՆ

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
4 Յունվար

ՍԻՍՈՒԱՆ, Համագրութիւն Հայկական Կիլիկիոյ և Լեւոն Մեծագործ — Յառաջաբան, Հ. Ղ. Վ. Մ. ԱԼԻՇԱՆ
ԳՐԱԿԱՆ Արձակ բանաստեղծութիւնք Իվան Թուրկենիէֆի — Ողորմութիւն — Երկու քառատող ոտանաւորներ. — Երկու աղաւնիներ. — Երկու եղբայրները. — Անձնասէրը — Երկու մեծահարուստները. — Մէջատը — Շունը — Թշնամին ու բարեկամը ՕՐ. * * *
ՉԱՓԱԳԻՏԱԿԱՆ Նոր Թուաբանութիւն մը — Հետեւութիւնք չորս գործողութեանց Յ. ՆՈՒՍՈՒՖԵԱՆ
ՆՈՐԱՎԷՊ Խրճիթի մը մէջ ԱՆԱՅԻՍ
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ Նուագ ներբողեան ընթերցեալ ի հանդէսի Սուրբ Օծելութեան Տէր Տէր ՄԱԿԱՐ Ա. Նորընտիր և Աստուածարեալ Հայրապետին ամենայն Հայոց և Սրբազնասուրբ Վեհափառ Կաթողիկոսին ի Նոր Ջուղա՝ յԱմենափրկչեան Սուրբ վանս 10/22 Նոյեմբերի 1885 ամի Տեառն Գ. Կ. Մ. ՋՕՀՐԱՊԵԱՆՑ
ՏԵՂԱԳՐԱԿԱՆ Վանէն մինչեւ Պայազիտ Մ. ՆԱԹԱՆԵԱՆ
ՄԱՍԻՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ Առաջարկեալ խնդիրք. — Խնդիր թիւ 11 — Լուծումն թիւ 7 խնդրոյ
ՔԱՂԱՔԱԿԱՆ Իտալիա
ՔԱՂՈՒԱԾ ՇԱԲ. ԼՐՈՑ Արտաքին, Ներքին, Ազգային

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ
ԱՂՋԿԱՆՑ ՀԱՄԱՐ
ՅԻՍԿԻՒՏԱՐ

Սոյն վարժարանի ձմրան շրջանը պիտի սկսի Յունվար 8/20ին:

Աշակերտուհեաց մասնաւոր խնամ կը տարուի ի ձեռն փորձառու ուսուցչաց եւ տեսչուհեաց որք ելած են Ամերիկայի բարձրագոյն ուսումնարաններէն:

Ծնողք կը հրաւիրուին գալ տեսնել մեծ առաւելութիւններն զորս վարժարանին հաճելի դիրքը, ընդարձակ շէնքերը, և պարտէզները, և բոլոր կարգադրութիւնք կը մատուցանեն վասն առողջութեան, ապահովութեան, և բարւոք դաստիարակութեան իւրեանց դստերց:

ՎՃԱՐՔ

Գիշերօթիկ աշակերտուհիք, տարեկան 30 ոսկի
Ցերեկօթիկ » » 4 »
Դաշնակի դասի համար » 8 »

Դպրոցի լեզուն Անգլիերէն է, բայց լաւագոյն պատրաստութիւնք կան ուսուցանելու Հայերէն, Տաճկերէն, Գաղղիերէն, Յունարէն և Պուլղարերէն:

ՖԷՆԻՔՍ PHOENIX FIRE OFFICE

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

ՏԱՐԵԿԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԸ Կ'ԱՆՑՆԻՆ 900,000 Անգլ. Ոսկի, ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ, ԱՒԵԼԻ ՔԱՆ 1,000,000 Անգլ. Ոսկի

ՎՆԱՍ ՎՃԱՐԵԱԼ ՄԻՆՉԵՒ 31 Դեկտեմբեր 1885 14,000,000 Անգլ. Ոսկի

ՀԻՄՆԵԱԼ, Ի ԼՈՆՏՈՆ 1782ԻՆ

ՖԷՆԻՔՍ իր տէրանց մէջ ունի Անգլիոյ ամենէն հարուստ և հանրածանօթ գլխաւորութիւնը, որոնք ընծայելով ամենակատարեալ ապահովութիւն իր յաճախորդաց: Ապահովագրութիւն ընդդէմ հրդեհի ամեն տեսակ անշարժ կալուածոց, կարասեաց և ապրանաց վրայ, ի Պոլիս և յարուարձանս, կատարելապէս ձեռամբ ստորագրելոյն որք լիակատար զօրութիւն ունին անմիջապէս և առանց ձեռնտուութեան կարգադրելու վնասներն և կորուստներն:

Թիւ 8 Մէհմէտ Ալի փաշա խան, Ղալաթիա

Գործակատարք ՔԼՈՆԱՐԻՏԻՍ ԵՒ ԸՆԿ.

ՀՐԴԵՀԻ ԹՇՆԱՄԻ

Բացարձակ ապահովութիւն վաւերացեալ ի տիեզերս, շնորհիւ ՀԷՅՈՒԱՐՏ ի կատարելագործեալ կրքնատներու որք ձեռքով կը գործածուին:

Գործածելու եղանակն. Շիշը կրակին վրայ նետեցէք այնպէս որ կոտրի. դուրս ելնող կազն անմիջապէս կը մարէ բոցերը:

Հարիւրաւոր հրդեհներ այսպէս մարած են շնորհիւ այս կրքնատներուն:

Յոյժ շահաւէտ պայմաններ ու չափաւոր գիներ:

ՄԹԵՐԱՆՈՑ ի Մէհմէտ Ալի փաշա խան, Թիւ 8 և Զագմագճըլար Եօգուշու, Թիւ 35

ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՍԻՐԱՄՔԵՐԻ

Պօզ բէնկլի Րուսիա ապասընտան մասմօւլ խասմթա ապասը ատէտ օն պին՝ պէհէր ատէտի օթուզ աէքիզ ղուրուշ:

Պօզ բէնկլի Ինկիլթէրա ապասընտան մասմօւլ մա պաշլըք գափօթ ատէտ օն պին, պէհէրի ելլի իւչ ղուրուշա.

Նիզամիյէ էլպիսէ անպարընա չուքուրիթը մուզայէտէսինէ վէ իթխայ օլունան նիւմունէլէրինէ թէվֆիքէն մուպայաա օլունմագ ուզրէ մէվզըյի մունագասայա գօնուլան պալատէ մուրագգամ իքի գալէմ գափօթ իլէ ապա ֆիյաթը մուրագգամալէրի իլէ թալիպի եօհտէսինտէ օլուպ քեանունի սանինին ալթընճը փազար իրթէսի կիւնինէ գատար պէհէր կիւն մունագասալարը պիլ իճրա մէզքիւր կիւնտէ գարարը գաթիյի վիրիլէճէկինտէն իթա իթմէկէ թալիպ օլանլարըն մէզքիւր թէմինաթ աքչէլէրի իլէ Հարպիյէ Նէզարէթի ճէլիլէսինէ մուրաճաաթլարը իլան օլունուր:

2 քեանունը սանի 1886

2—3

ԻԼԱՆ

ՇԷՀԻՐ ԷՄԱՆԷԹԻ

Կաղխանէլէր իչին Րաեօզ Էսկիմֆօլ վէ Պավուզ ճինսինտէն մինամբէֆէթի պիլ միւնագասա ալընաճագը էվվէլճէ իլան օլունան օն իքի պին թօն կաղ քէօմիւրինին գարարը գաթիյի քեանունը սանինին օն պէշինճի չարշէնպա կիւնի վէրիլէճէկինտէն, իթասընա թալիպ օլանլարըն միւտաէթը մէրգումէ զարֆընտա թէհմինաթ աքչէսի վէ եա քէֆիլլէրի իլէ Շէհիր Էմանէթի մէճլիսինէ կէլմէլէրի իլան օլունուր:

31 Քեանունը էվվէլ 301

2—3

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԿՐԱՆԹ ՆԱՒԱՊԵՏԻՆ ՈՐԴԻՔԸ

ՊՍԱԿԵԱԼ Ի ՃԵՄԱՐԱՆԷՆ ՖՐԱՆՍԱՑԻ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ Կ. Ս. ԽԻԹԻՃԵԱՆ

Մեծանուն Ժիւլ Վէռնի այս ընտիր հռչակեալ գործ, Արեւելքի մէջ իբր թերթօն հրատարակուելէ յետոյ, ի խնդրոյ գրասէր ազգայնոց, առանձին եւս տպագրուելով եռահատոր գիրք մը կազմած է:

Կը գտնուի Արեւելք լրագրոյ գրասենեակն և ամեն Հայ գրավաճառաց քով. եւս և Զմիւռնիա Պօղոս և Յակոբ աղաներուն խանութներն ի Պաշճէ Գափու: Գին մէն մի հատորի 7½ ղրուշ:

ՇԱՀԱՒՈՐ ԱԶԴ

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ ՌՈՒՄԷԼԻԻ ԵՐԿԱԹՈՒՂԵԱՑ

Որքէն յայտնի է թէ՝ սոյն վիճակահանութիւնն երկու ամիսը անգամ մը տեղի կ'ունենայ արքունի Փօղէրանոցին մէջ:

Այս անգամ 96րդը պիտի քաշուի յառաջիկայ ըստ եւրոպական 1886 փետր 1ին—ըստ յունաց յունվ. 20ին—և 500 թիւեր պիտի շահին. առաջին պարգեւն է այս անգամ 300,000 և երկրորդը 25,000 ֆրանք: Ասոնցմէ զատ 48 թիւեր եւս այլ և այլ մեծ պարգեւներ, իսկ մնացեալ 450 թիւերն 400 ական ֆրանք պիտի շահին:

Շահելի գումարին ամբողջն ստանալու իրաւունք ունեցող բաղդատոմսին գինն է 7½, կէսին 5 և մէկ քառորդին 3 դահեկան: Ասոնց մայրերը Եսայեան և Զարիֆի դրամատուններն են: Դասատոմսերէն հնչուն դրամի տեղ ֆօււլ և ամեն լեզուէ նամակ կ'ընդունուի:

Ի վաղուց չհայուած բաժնեթղթոց թիւերն առանց ս. և. է. փոխարինութեան կը նայուին:

Կալուածական տրոց գործողութիւնք եւս կը կատարուին:

Յանձնարարութիւնք ընդ փոյթ կը կատարուին: Դիմել ուղղակի առ

ՄԱՐԳԱՐ Յ. ԳՈՒԼԱԳՕՐՃԵԱՆ

Ղալաթիա, Կամարըճի գլուխ Թիւ 33.

ԱՅԷՐԻ ՋԷՐՐԻ ՓԷՔԹՈՐԱԼՆ

Այէրի Ջէրրի Փէքթորալն արագապէս կը բուժէ հարբուխները, հազերը, կոկորդի վէրքը, փողոցաւը, բորբոքումն հազագի, բորբոքումն շնչափողի, շնչարգելութիւն եւն:

Այս դեղը հրաշալի կերպիւ կը զօրացնէ տկար թոքերը, կը հանդարտեցնէ թոքային գրգռումները, և կտրուկ հազի և յառաջացեալ թոքախտի համար միակ դարմանն է, որ հզօրապէս կ'սփոփէ ու կը կազդուրէ:

Այէրի Ջէրրի Փէքթորալն որ այնքան մեծ համբաւ ստացած է իբրեւ ամենէն հզօրագոյն դարմանն զոր գիտութիւնն ի լոյս ընծայեց, շնորհիւ նորա կոկորդի և թոքային ախտութեանց վերայ ունեցած ուժգին և միօրինակ նուաճող ազդեցութեանն է, որով միանգամայն իւր առաքինութեանց ջատագովն և պաշտպանը կը հանդիսանայ:

Չկայ դեղ մի որ կրնայ այնքան կարեւոր լինել հիւանդին քան զայս, և կամ աւելի արժանիք ունենայ նորա կատարեալ վստահութիւնը գրաւելու:

Ջէրրի Փէքթորալն ընտանեկան գործածութեան համար եղած ուրիշ դեղերէ գերազանցն է և համեղ, քանզի շատ հաճելի լինելով փոքր տղայք շատ դիւրաւ կ'առնուն: Կեդրոնատեղին է Ս. Մ. ՄԻՆԱՍԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԱՑ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆՆ, ի Ղալաթիա Կոստանդնուպոլսոյ:

Նաեւ կը ծախուի քաղաքիս մէջ այլ և այլ դեղագործաց քով:

ՆԻՔՕՍԻՏ, ԴԵՂԹԱՓ ԸՆԴԴԷՄ ԾԽԱԽՈՏԻ

ԸՆՏԱՆԵԱՑ ԵՒ ԱՐՀԵՍՏԻՑ ՀԱՄԱՐ

ՍԻՆԿԻՐ

ՃՇՄԱՐԻՏ ԵՒ ԼԱՒԱԳՈՅՆ

ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՅՆԵՐԸ

ԿԸ ԳՏՆՈՒԻՆ ՄԻԱՅՆ

ԳՈՐԾԱՐԱՆԻՆ ՄԹԵՐԱՆՈՑՆԵՐԸ

Ղալաթիա, Կլավանի խան, 2
Պոլիս, Մահմուտ փաշա, 90
Բերա, Մեծ փողոց, 208

Ներկայացուցիչ Թուրքիոյ համար
Կ. ՆԻԷՏԼԻՆԿԷՐ

ԶԳՈՒՇԱՆԱԼ ԿԵՂԾԵՐԷՆ

Ամեն ճշմարիտ մեքենայ կը կրէ թեւին վրայ Singer Manufacturing Company և վրան՝ Գործարանին նշանը:

ՁՐԻ ԱՇԿԵՐՏՈՒԹԻՒՆ.—ՉԱՓԱՒՈՐ ԳՆԵՐ

ԴԻՒՐՈՒԹԻՒՆ ՇԱԲԱԹԱԿԱՆ ՎՃԱՐՄԱՆ

ՎԻԱԼԻ ԳԻՆԻ

ԿԱԶԴՈՒՐԻՉ ԶՕՐԱՑՈՒՑԻՉ ՎԵՐԱՆՈՐՈԳԻՉ

ՔԻՆԱՅՈՎ ՄՍԻ ՀԻՒԹ ՖՈՍՖԱԹ ՏԸ ՇՕ

Ամենազգու կազդուրիչն զոր պարտին գործածել Ապաքինողները, Ծերերը, Կանայք, տկարակազմ Տղայները և ամեն փափուկ անձինք:

Բաղկացեալ Մկանանց և Ջղային ու Ոսկրային դրութեանց կազմութեան և զարգացման յոյժ անհրաժեշտ նիւթերով:

ՎԻԱԼԻ ԳԻՆԻՆ ամենէն ազդու դեղերու միաւորութիւնն է, ընդդէմ Արեան տկարութեան, Դեղնութեան, Թոքախտի, Ստամոքսի ամեն ցաւերու, փորհարութեան, Հիւծման, երկար ապաքինմանց, եւայլն. ի մի բան, Թուլութեան, Վատութեան, Ջղային ուժհատութեան ամեն վիճակներուն որոց շատեր չարաչարք կերպիւ ենթակայ են մեր օրերս:

ԼԻՈՆ—Դեղարան Ժ. ՎԻԱԼ, Պուրպոն փողոց, 14—ԼԻՈՆ

Պոլսոյ մէջ կեդրոնատեղին է ընդհանուր Մթերանոցն Ալեքսանտրի դեղարան Տէկլա-Սուտա, Բերա մեծ փողոց 169:

CAISSE GENERALE D'EPARGNE ET DE CREDIT

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍՆՏՈՒԿ ԽՆԱՅՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԱՐԿԻ

կեդրոնատեղի 116, հրապարակ Լաֆայէթ, Բարիզ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 1,000,000 ՖՐԱՆՔ

Բարիզի Ընդհանուր Խնայողական Սնտուկին գործառնութիւնքն են, Գաղղիոյ կառավարութեան անմիջական «երաշխաւորութեան» ներքեւ գտնուող, և մեծամեծ պարգեւներով վիճակահանութեանց ժամանակցող ֆրանսական արժէթղթոց վաճառումը:

Ընկերութիւնը կազմուած լինելով 24 Յուլիս 1867 Թուագրեալ օրինագրին տրամադրութեանց համաձայն, իւր գործողութիւնք Ֆրանսայի կառավարութեան քննութեանն «գոնթրօլ» ենթարկուած են: Այս մեծ և անժխտելի ապահովութիւն մ'է զոր ընկերութիւնն ընծայէ յաճախորդաց:

Ընկերութիւնը կը դիւրացնէ հասարակութեան «ամսական վճարմանց միջոցաւ» գնելը մի փոքր հարստութիւն և ունենալ միանգամայն մեծ պարգեւ մը շահելու յոյսն:

Առաջին ամսավճարն տրուելուն պէս, բաժանորդն կ'ընդունի իւր գնած արժէթղթին թիւն, և կը վայելէ նորա իրաւունքներն, որպէս թէ բաժնէթղթին գինն ամբողջովին վճարած լինէր. Հետեւաբար արժէթղթին շահելիք պարգեւներն և տոկոսի կտրոններն իրեն կը վերաբերին:

Ամսական վճարմունք են, ըստ արժէթղթին 5, 10 և 20 ֆրանք:

Մանրամասն տեղեկութեանց համար դիմել առ Ընդհանուր Ներկայացուցիչն Ընկերութեան վասն Թուրքիոյ, Ապտուլլահ Նասիֆ էֆէնտի, 4 Պահճէ-գաբու, Կ. Պոլիս:

Ներկայացուցիչ ի Պրուսա, Յովհաննէս էֆէնտի Յ. Պօստուրեան

Ներկայացուցիչ ի Զմիւռնիա Միսիւ Փ. Փէթրօզօգինօ:

(ՇԱՔԱՐՈՎ ՊԱՏԱԾ)

ՀԷՅՏՈՔԻ

ՆՈՐ ՓԱՅԾԵՂՆԻ ԴԵՂԱՀԱՏՆԵՐ

Աւասիկ ընդհանուր բժշկութեան զարմանալի և արտակարգ գիւտ մը: Գիտութեան յաղթանակները —Ելեկտրական Հեռագիրը, Շոգի, Տպագրութիւն— յեղափոխեցին երկրագնդիս դրութիւնը, և մարդկային կեանքն ըրին լաւագոյն և իմաստնագոյն: Այսպէս, թեպէտ անհամար Դեղահատներ կան հիւանդութեանց համար, և մեծ արժանիք վերագրելով հանդերձ անոնց, Տոքթոր Հէյտոքի գիւտը նսեմացուցած է անոնց ամենքն և հիմնած է

ԲԺՇԿԱԿԱՆ ՆՈՐ ԴՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Բժիշկք, որոց պատուիրած օրական չորս կամ հինգ դեղահատները կը տկարացնեն ստամոքսը եւ կ'անդամալուծեն աղիքները, պիտի կրնան իրենց հիւանդաց առողջութիւն և ախորժակ տալ այս արտակարգ Դեղահատներէն մէկ երկուքով: ՏՈՔԹՈՐ ՀԷՅՏՈՔԻ ՆՈՐ ՓԱՅԾԵՂՆԻ ԴԵՂԱՀԱՏՆԵՐԷՆ մէկ երկու հատը կը բաւեն դնելու համար ստամոքսն կատարեալ կանոնաւորութեան և ախորժակի մէջ, և միտքն պայծառ ու թեթեւ ընելու: Եթէ փայծեղը տկարացած է իւր գործին մէջ, կը կազդուրի, և եթէ Ջղային դրութիւնը խանգարուած է, կը վերակազմուի:

ՄԱՂՁՈՏՈՒԹԵԱՆ ՆՇԱՆՔ

1. Ստամոքսի ծանրութիւն:
2. Աղեաց տարածումն փքախտի պատճառաւ:
3. Սրտացաւութիւն,
4. Ճաշէն յետոյ տկարութիւն և յոգնութիւն:
5. Բերնին մէջ գէշ համ մը և ծանր լեզու:
6. Սրտախառնութիւն, մերթ ընդ մերթ ալ փորհարութիւն.
7. Գլխու ցաւ ճակտի վրայ:
8. Ախորժակի պակասութիւն և մեծ յոգնութիւն.

Վերոյիշեալ ամեն նշաններն բացորոշապէս ցոյց կուտան թէ խանգարում յառաջ եկած է փայծեղին մէջ, եւ պէտք է յիշել թէ մեծ կարեւորութիւն ունի սխալ կերպիւ չըմբռնել հիւանդին ճիշդ վիճակը: Պէտք է անմիջապէս ՓԱՅԾԵՂՆԻ ԿԱԶԴՈՒՐԻՉ մը հայթայթել, որ դեղահատի մը ամենէն սովորական ձեւն է: Ամենօրեայ փորձառութիւնը ցոյց կուտայ թէ եթէ դեղահատը լաւ կերպիւ բաղադրեալ է, ամենայարմար կերպիւ կրնայ վերանորոգել փայծեղնի գործողութիւնը, և այդ մասին կարելի է միշտ վստահութիւն ունենալ: Իմ կենացս բազմաթիւ տարիները նուիրած եմ շինելու համար Դեղահատ մը որ լինի անմիջական և ազդու դարման մը ընդդէմ մաղձոտութեան: Մեծ հաւատ չունիմ լուծողական դեղերու վրայ, ուստի եւ շինեցի Դեղահատ մը որ զօրաւոր եւ ազդու դարման մ'է, եւ կոչեցի

J. HAYDOCK'S
NEW LIVER PILL

ՀԷՅՏՈՔԻ ՆՈՐ ՓԱՅԾԵՂՆԻ ԴԵՂԱՀԱՏ

Առողջութեան խոկոյթիւնն են, եւ այն մեծագոյն բարիքն զոր Գիտութիւնն ըրած է մարդկութեան:

Ջլախտութեան, Անզօրութեան, Ընդհանուր յոգնութեան, ախորժակի պակասութեան, Գլխացաւութեան համար, Տոքթոր Հէյտոքի Նոր փայծեղնի դեղահատերն ամենազդու դարման են:

Ամէն մի տուփ կը պարունակէ քսան դեղահատ: Գինն է 25 սէնթ: Կը ծախուի ամեն դեղավաճառաց քով:

Տարակուսող անձինք կրնան, փորձի համար, ՁՐԻԱԲԱՐ ստանալ այս Դեղահատներէն տուփ մը, եթէ մեզ ղրկեն իրենց անունն եւ հասցէն:

Թղթատարական տոմս մը ղրկել «փայծեղն եւ իւր գաղտնիքը» խորագրով տետրակին: Հարկ եղած տեղեկութիւնները կը տրուին ամենուն:

ՀԷՅՏՈՔ ԵՒ ԸՆԿ.
Նիւ-Եորք, Մ. Ն.

Կը ծախուի ի Ղալաթիա, Գամիթօրիաէսի դեղարանը, ի Պոլիս Քիւչիւքեան դեղավաճառանոցն և Նէգինի:

ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ —Կը խնդրուի դեղավաճառներէն ուշադրութիւն ընել որ Ճ. Հ. Ֆրանսիսի, որ միակ Գործակատարն է, ստորագրութիւնը դրուած լինի: Հակառակ պարագայի մէջ, դեղահատները կեղծ են:

HUILE DE HOGG

ՄՕՐԻՒ ՁԿԱՆ ԲՆԱԿԱՆ ԻՒՂ

Որոյ ազդուութիւնն հաստատուած է 25էն աւելի տարիներու փորձով հետեւեալ հիւանդութեանց համար. կուրծքի հիւանդութիւն, Թոքախտ, Թոքառաջնեց հիւանդութիւն, Հարբուխ, յամառ հազ, խոյլ, աղային գեղձերու ուռուցներ. մորթի հիւանդութիւնք, որքեն, սպիտակ ղաշտան, ընդհանուր տկարութիւն եւայլն. Նաեւ տկար և վատթարակազմ տղաքները զօրացնելու համար շատ դիւրաւ կը խմուի:

Զգուշանալու է ստորոտական իւղերէն և մանաւանդ անոնցմէ որ չհամեմատական նմանութիւններով բնական իւղերու տեղ և իբր թէ անոնցմէ աւելի ազդութիւն և սնունդ համ տալու համար շինուած են: Այն իւղերն ուրիշ չէին գործածեր բայց միայն ստամոքսը ընդդռնելու և հոգնեցնելու. երբեմն շատ վտանգաւոր եւ կրնան ըլլալ:

Բնական և զուտ ձկան իւղ գտնելու ապահովութեան համար պէտք է գտնել ՀՕԿԻ ԻՒՂԸ, որ եռանկիւնի շիշերով կը ծախուի: Պահանջել հօկի անունը և Բարիզի բժշկական ձեմարանին բժշկական պրոֆէսոր Պ. Լուիւէզօի վկայութիւնը որ իւրաքանչիւր շիշի կթիկէթին վրայ կը գտնուի: Տէկլա Սուտայի եւ այլ Պոլսոյ համբաւաւոր դեղավաճառաց քով կը գտնուի: 1883 տարւոյ յունուար 1 էն սկսեալ հօկի մօրիւ ձկան բնական իւղի շիշերուն էթիքէթներուն վրայ Գաղղիոյ կառավարութեան կնիքն պիտի գտնուի ուստի այս մասին ուշադրութիւն ընելու՝ գործարանի նշանը:

ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ԽԻՂՈՑ ԱՆՀԱՄ ԵՒ ԱՆՀՈՏ

[illegible] Ք. ՏՕԳՕՆԻՏ [illegible]

ԲԱԲԱՅԵԱՆԻ

ՇՈԳԵՆԱՒԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լիվրբուլի, Միջերկրականի և Օտեսայի միջեւ կանոնաւորապէս բանող

Անուանք	Թօնոյ	Նաւապետք
Այա Սօֆիա	3,000	Պըք
Արարատ	2,500	Ռոճըրս
Արքատիա	2,500	Քրուքշանք
Լաւոնիա	2,500	Ուիլք
Մասէտոնիա	3,500	Մորշ
Բուլկէրիա	2,800	Ֆօթըրճիլ

Մասէտոնիա շոգենաւն ընդհուպ պիտի ուղեւորի ի Լիվրբուլ:

Բուլկէրիա շոգենաւն յունուար 2ին Պաթումէն աստ կուգայ և ի մօտոյ վերստին կը մեկնի ի Պաթում:

Պրէճիա շոգենաւն յունուար 2ին Լիվրբուլէն աստ կ'սպասուի:

Ընկերութիւնն օրինաւոր գներով վաճառք կ'ընդունի Եւրոպական երկիրներու և Ամերիկայի համար:

Ամեն դիւրութիւն և հանգստութիւն կը տրուին ուղեւորաց:

Դիմել առ ԴԱՆԻԷԼ ԲԱԲԱ ԵՒ ԸՆԿ.

513 Գործակալք

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՄԱՐՈՔԵԱՆ

Ն. ԲԱՔԷ ԵՒ ԸՆԿ.

Մարսիլիոյ և Բօսֆորի միջեւ կանոնաւորապէս բանող

Սամսոն, Տրապիզոն և Պաթում երթալիք յառաջիկայ շոգենաւն է Անաթոլ, որ յունուար 13ին Մարսիլիայէն և յունվար 20ին Կ. Պոլսէն պիտի մեկնի:

Մարսիլիա երթալիք յառաջիկայ շոգենաւն է Մէնկրէլ որ պիտի մեկնի յունուար 18 ին երեկոյեան ժամ 4 ին:

Մեսօլ շոգենաւն փետրուար 10 ին պիտի մեկնի ի Հավր:

Ուղեւորք և ապրանք կ'ընդունուին

Նաւողչէքի, ուղեւորութեան և այլ տեղեկութեանց համար

Դիմել առ գործակատարն ԹԻՆԻՌԹԷ ՐԸՊՈՒԼ

Թիւ 17-18 Քիւչիւք Միլլէթ

514 Մուհանէ փողոց, Թիւ 141

ՔԻՒՆԱՐՏ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

Որք ամէն շաբաթ կանոնաւոր կը բանին Լիվրբուլի և Միջերկրականի միջեւ.

Անուանք	Թօնոյ	Անուանք	Թօնոյ
Օրանիա	7,000	Մալթա	3,000
Ատլաս	3,000	Մորոքքօ	2,500
Ալէբբօ	3,000	Նամթ	2,500
Պավոնիա	4,600	Բոթնիա	5,000
Պալմիրա	2,500	Բավերիա	3,000
Պրիթիշ Քուին	1,200	Սէրվիա	7,800
Սեֆալոնիա	5,000	Սկիւթիա	4,600
Քադալոնիա	4,700	Սարակոսա	3,000
Շէրպուրկ	2,000	Սամարիա	3,000
Տէմէրարա	2,500	Սիտոն	3,000
Կալլիա	4,000	Թարիֆա	3,000
Քէտար	2,500	Թրինիտատ	2,500
Մարաթոն	3,000		

Մալթա շոգենաւը, նաւապետ Լավիս, ամսոյս 23 ին Լիվրբուլէն աստ կ'սպասուի:

Ստորագրեալն արտօնութիւն ունի ուղեւորներ և վաճառք ընդունիլ Նիւ-Եորքի, Պոսթընի, կամ Ամերիկայի և Գանատայի ուրիշ և ուէ նաւահանգստի համար:

Դիմել առ ԹՈՄԱՍ Չ. ՃՈԼԻ

Գործակատար

Թիւ 1 Քիւչիւք Հաւիլլ փաշա խան Ղալաթիա

511

ԱԶԴ

Պատիւ ունիմ ծանուցանել Պոլսոյ ազնիւ հասարակութեան թէ այդ մայրաքաղաքին մէջ կը շինուին եւ կը ծախուին յոյժ գէշ տեսակ եւ ստորին վառարաններ, որք իմ Գործարանիս ԽԱՐԴԱԽԵԱԼ նշանը կը կրեն և իմ ՀՌՉԱԿԵԱԼ վառարանացս կեղծերն են:

Ուստի պարտ անձին կը համարիմ ծանուցանել հասարակութեան թէ Թուրքիոյ համար իմ ՄԻԱԿ ներկայացուցիչս է

ՀԷՆՐԻԽ ԼԱՆԺ

—24, Բէրքէմէզ Պօղօշ, 24—

—32 Մահմուտիէ Ճատէսի 32—

ԳԱԼԱԹԻԱ

Որ արտօնեալ է ըստ օրինաց տրամադրութեան դատ բանալ յիշեալ անձանց դէմ:

Ռ. ԿԷՊՊԻԷՐԹ

VII,— Kaiserstrasse No 71

ՀԱՅ ԹԷՅԱՎԱՃԱՌՆ

Կը վաճառէ ամեն տեսակ ընտիր թէյեր: Ամեն յաճախորդք որ դիմեն Թահմիզ փողոց Թիւ 70 (Մըսըր Չարշըլի կից, աղբիւրին վերի կողմը) գոհ պիտի լինին իրենց ստացած թէյերուն թէ՛ տեսակէն և թէ՛ գնէն:

ՄՈՍ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լիվրբուլի և Միջերկրականի միջեւ բանող շոգենաւք

Անուանք	Թօնոյ	Անուանք	Թօնոյ
Քառնաք	4200	Օսայրիս	3000
Քէրպէլա	4000	Նեֆթիս	3000
Օսմանլի	4000	Բերա	3000
Սեսոստրիս	3250	Ատլանտիք	1700
Թեպս	3250	Լոթիւս	800
Մամֆիս	3250	Օլինտա	800
Մարիոթիս	3250	Սեւիլ	700
Սֆինքս	3000		

Սֆինքս շոգենաւը, նաւապետ Քրուք, Լիվրբուլէն աստ հասաւ ընդհանուր վաճառքով:

Թեպս շոգենաւը, նաւապետ Տըֆֆի, յունվար 9ին Լիվրբուլէն աստ կ'սպասուի ընդհանուր վաճառքով:

Դիմել առ Ճ. Թ. ՈՒԻԹՈԼ և ԸՆԿ.
Մէյտանլըգ փողոց,
Ուիթոլ խան

ՃԷՅՄԶ ՄՈՍ և ԸՆԿ.

515 31, Ճէյմս Սթրիթ, Լիվրբուլ

ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՈՒՑ

Ընդ մէջ Անգլիոյ, Կ. Պոլսոյ և Օտեսայի

ԹՈՎՄԱՍ ՈՒԻԼՍԸՆ ՈՐԴԻՔ ԵՒ ԸՆԿ.

Անուանք	Թօնոյ	Անուանք	Թօնոյ
Ալպանօ	2,000	Լէրանտօ	4,500
Անճէլօ	3,000	Մարէնկօ	4,300
Արկօ	1,300	Մարանօ	2,500
Պասսանիօ	3,500	Միլօ	2,000
Պորոտինօ	2,200	Ներօ	2,000
Պրավօ	2,000	Օթէլլօ	5,000
Կէյրօ	2,600	Օրլանտօ	3,000
Կալիլէօ	2,500	Օտրանտօ	4,500
Գամէօ	2,100	Օթթօ	2,000
Գադօ	2,000	Բասիֆիք	1,200
Գոմօ	2,700	Բալէրմօ	3,200
Տինօ	2,500	Բասքէր	1,700
Տօմինօ	1,800	Ռիգօ	2,800
Էրասօ	2,600	Ռիալթօ	4,400
Տասօ	2,600	Ռինալտօ	3,200
Ֆալքօն	800	Ռօլլօ	3,000
Ֆիռօ	1,700	Ռոմանօ	5,500
Ֆլամինկօ	1,600	Ռոմէօ	3,500
Կալիկօ	5,500	Սալէրնօ	4,000
Կիդանօ	2,200	Սարֆօ	2,000
Կօզօ	1,800	Սիլվիօ	2,000
Կրոտոնօ	2,200	Սորէնդօ	4,300
Հանկօ		Թասսօ	1,200
Հէրօ	2,000	Թ. Ուիլսըն	3,000
Հիտալկօ	3,000	Թիկէր	1,300
Հիւմպըր	1,200	Թոլէտօ	2,800
Ճիօ	2,300	Քանտօ	3,600
Քէլսօ	2,000	Վեսա	1600
Քօֆօ	2,200	Զէնօ	3,000
Լէօ	2,000	Զերօ	1,100

Ռինալտօ շոգենաւը, նաւապետ Նիւմէն, ընդհանուր վաճառքով Հըլէն աստ հասած, պարպած և Օտէսա ուղղեւորած է:

Թասսօ շոգենաւը, նաւապետ Մօնրօ, ընդհանուր վաճառքով ամսոյս 4 ին Հըլէն մեկնած է Կ. Պոլիս գալու համար, և ամսոյս 22 ին աստ կ'սպասուի:

Տասօ շոգենաւը, ընդհանուր վաճառքով այժմ կը բեռնաւորի ի Հըլ և ամսոյս 22 ին պիտի մեկնի ի Պոլիս գալու համար:

Ուղեւորներու համար ամեն դիւրութիւն կ'ընծայուի

Աւելի մանրամասնութեանց համար դիմել առ ՖՐԷՏԷՐԻՔ ՀԻՒՏ ԵՒ ԸՆԿ.

Գործակալք

Թիւ 17-18, Քիւչիւք Միլլէթ խան Ղալաթիա

514

ՖՐԷՏ. ԼԷՅԼԱՆՏ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

Որք կանոնաւորապէս կը բանին Լիվրբուլի և Սեւ-ծովու միջեւ.

Անուանք	Թօնոյ	Անուանք	Թօնոյ
Ալճէրիան	2500	Ֆաւոնեան	3700
Ալզասեան	2500	Ֆլավեան	3700
Անտալուզեան	2500	Ֆլորեան	3700
Աթենեան	2500	Իբերիան	5500
Արաբեան	3700	Իլլիրիան	5500
Պավարեան	6000	Իսթրիան	5500
Պուլկարեան	6000	Լեսպիան	2200
Քամպելեան	800	Լիկուրեան	2500
Սիպրեան	2000	Լիպեան	800
Տուրոյ	700	Օբորթօ	700
Էճիբշըն	3700	Բերսիան	3800
Ֆաբիան	3700	Վալենսիան	6800
Ֆալերնեան	3700	Վիրճինեան	6800

Ալճէրիան շոգենաւը, նաւապետ Լառրանսոն, ամսոյս 18 ին երկուշաբթի օր Զմիւռնիոյ ճամբով դէպ ի Լիվրբուլ պիտի ուղեւորի:

Ուղեւորներու համար ամեն դիւրութիւն

Աւելի մանրամասնութեանց համար դիմել առ ԷՏՈՒԱՐՏ ԼԱՖՈՆԹԷՆ

Գործակալ

Թիւ 34, 35, 36, Եէնի Միլլէթ խան, Ղալաթիա.

Նաւատէրք, Պարոնայք Ֆրէտ, Լէյլանտ և ընկ. Լիվրբուլ

Գործակալութիւնք

Կ. Պոլիս, Էտուարտ Լաֆոնթէն.
Ճիպրալթար, Պ. Պ. Քարվըր Եղբարք
Աղեքսանդրիա, Կ. Լ. Վաչման և ընկ.
Մալթա, Ա. Քամիլլերի.
Շիրա, Ա. Մ. Մամբօլորտաղոյ.
Զմիւռնիա, Պ. Ռեիգօլ և ընկ.

512

Արտօնատէր Ս. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ